

ԻՐԱՆ ԶԵՐԲԱԿԱԼԵՑ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՄԻՋԱԴԵՊՈՒՆ ԳԾՈՎ ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ

Իրանեան սպասարկութիւնները երէկ ձեռքարկած են քանի մը կասկածելիներ, որոնք կրնան յանցագործները ըլլալ Թեհրանի բրիտանական դեսպանատան վրայ կատարուած վիճակ յարձակումին: Լուրը պաշտօնապէս հաղորդեց Իրանի պատկերասփիռի պետական կայանը: Սեպտեմբերի ընթացքին երեք յաջորդական միջադէպեր արձանագրուեցան բրիտանական դեսպանատան դէմ, յառաջացնելով երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական տագնապ մը, որ կը յամենայ:

ՕՊԵՅՏ ՏԵՍԱԿՑԵՑԱԲ ՊԱՊՈՒՆ ՅԵՏ



Արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ երէկ ընդունուեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. պապին կողմէ: Հանդիպումին ընթացքին քննարկուած առարկայ դարձան Միջին Արեւելքի նորագոյն իրագործութիւնները: Միւս կողմէ, երէկ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդեց, թէ Կիրակի օր կը նախատեսուի Օպէյտի այցելութիւնը Մոսկուա:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԴԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Իսրայէլեան աօրբայ բռնարարներու ծիրէն ներս, Այսրյորդանանի ժենին քաղաքին մօտակայ Քապաթիա գիւղին մէջ 3 պաղեստինցիներ վիրաւորուած են եւ շուրջ 20 ուրիշներ ձեռքարկուած երէկ, գիւղին մէջ իսրայէլեան բանակին մէկ գործողութեան ընթացքին: Միւս կողմէ, բանակային աղբիւրներու համաձայն, երէկ առաւօտուն գինեալ պայքարի դիմած 16 պաղեստինցիներ ձեռքարկուած են Այսրյորդանանի մէկ այլ շրջանին մէջ. անոնց 15ը Համասի խմբակին անդամներ են: Մինչ այդ, ըստ պաղեստինեան ապահովութեան աղբիւրներու, Կազայի մէջ պաղեստինցի երեսփոխան Մուհամէտ Հիթաբիի տունը նիւթական մեծ վնասներ կրած է իսրայէլեան հրթիռներու կողմէ: Մարդկային վնասներ չեն արձանագրուած:

Ինչ կը վերաբերի Իսրայէլի բարձրացուցած պատնէշին, իսրայէլեան բանակին մէկ բանբերը երէկ ըսած է, թէ արգիլելու համար «ահաբեկիչներու» պատնէշին մօտենալ, բանակը յատուկ միջոցառումներու պիտի դիմէ: Ան յայտնած է, որ պաղեստինցիներուն պիտի արտօնուի մօտենալ պատնէշին միայն ճշգրտուած վայրերու վրայ, ուր դռներ կառուցուած են եւ միայն անոնց բաց եղած ժամանակամիջոցին: «Անոնք պէտք է իրենց անցքը համակարգեն տեղական իսրայէլեան - պաղեստինեան կապի գրասենեակին հետ», ըսած է ան: Իսրայէլ աւարտած է Այսրյորդանանը Իսրայէլէն բաժնող պատնէշին առաջին մասին կառուցումը: Զորեքարթի օր, կառավարութիւնը որոշած էր զայն երկարել:

ԻՐԱՔԻ ԳԾՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԲԱՆԱԶԵԻՆ ՆԱԽԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՂ ԶՈՒՐ ԹԱՓՈՒԵՑԱԲ, ՄԻՆՉ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԶԱՐԶԱԿՈՒՄՆԵՐԸ ՇԵՏՇԵՏԵ ԿԸ ՍԱՍԿԱՆԱՆ



Իրաքի դէմ պատերազմին ընդդիմացող գլխաւոր երկիրները երէկ պաղ ջուր թափեցին Իրաքի վերակառուցման գծով ամերիկեան նոր բանաձեւի մը նախագիծին վրայ, մինչ ամերիկեան ուժերը դարձեալ թիրախ կը դառնային «հետպիտէտէ աւելի մահացու դարձող թշնամիի մը կողմէ», ըստ ամերիկացի բարձրաստիճան հրամանատարի մը: Համաշխարհային Դրամատան եւ ՄԱԿի գնահատումներով, 36 միլիարտ տոլար պէտք պիտի ըլլայ Իրաքի վերակառուցման համար՝ 2004էն 2007ին:

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան շեշտած է 15 անդամ հաշուող Ապահովութեան Խորհուրդին, թէ չի կրնար ընդունիլ ամերիկեան բանաձեւին պայմանները, մինչ անկա նկատի չէ առած իր առաջարկները՝ Իրաքի մէջ քաղաքական իշխանութեան փոխանցման ձեւերուն մասին: Անան ըսած է, թէ իր առաջարկը՝ առիթ տալու իրաքցիներուն, որ նախ կառավարութիւն մը կազմեն, նախքան սահմանադրութեան մը մշակումը, ապա ընտրութիւններ կայացնեն, կրնայ օգտակար ըլլալ ամերիկեան ուժերուն դէմ յարձակումներուն վերջ տալու:

Ամերիկեան նորագոյն առաջարկները, որոնք Հինգշաբթի օր Ա. Խորհուրդին կողմէ քննարկուած են, նախ սահմանադրութեան մը մշակումին մասին կը խօսին՝ նախքան քաղաքական իշխանութեան «աստիճանական» յանձնումը իրաքցիներուն: Սահմանադրութեան մշակումը ամիսներու կը կարօտի բնականաբար:

Ֆրանսա երէկ յայտնած է, որ բանաձեւը գրեթէ որեւէ ձեւով նկատի չ'ունենար իր մտահոգութիւնները եւ անկա «չի պարունակեր մեր կողմէ առաջարկուած մօտեցումի փոփոխութիւնը», ըսած է արտաքին գործոց նախարարութեան բանբերը:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտնած է, թէ գոհ չէ բանաձեւի նախագիծէն, թէեւ ամերիկացիք կը փորձեն միջին եզր մը գտնել, աւելցուցած է ան:

Գահիրէի մէջ, Իրաքի Իսլամական Յեղափոխութեան գերագոյն խորհուրդի ներկայացուցիչ Ռիտա Ճաուաթ Թաքի ըսած է, որ բանաձեւը «տկարէ», որովհետեւ անկա օտար ուժերու հեռացման առնչութեամբ «ժամկէտ մը եւ ժամանակացոյց մը չ'ընդգրկեր»:

Ան աւելցուցած է, որ նշեալ շիի կուսակցութիւնը նաեւ ժամանակացոյց մը կ'ուզէ իշխանութեան փոխանցումին գծով՝ ամերիկեան ուժերէն եւ ՓՕԼ Պրեմերի քաղաքային վարչակարգէն իրաքցի ժողովուրդին:

Իսկ կուսակցութեան ղեկավար Ապտէլ Ալի Վաքիմ Նաժաֆի մէջ ըսած է, որ երկրին համար մնայուն սահմանադրութեան մը մշակումը պէտք է կատարուի իրաքցի ժողովուրդին կողմէ ընտրուած մարմինի մը կողմէ եւ վաւերացուի երկրին տարածքին տեղի ունեցող հանրաքուէով մը:

Շարք՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆ ԺԻՊՐԱՅԻԼ ԺԱՍՐԱ ԻՐ ՀԱՒԱՏԱՐՄԱԳԻՐԸ ՅԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՅ ԲՈՉԱՐԵԱՆԻ



Հայաստանի մէջ Լիբանանի նորանշանակ դեսպան Ժիպրայիլ Ժաւար երէկ իր հաւատարմագիրը յանձնեց Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեանին: Դեսպանը նախագահ Քոչարեանին փոխանցեց Լիբանանի նախագահ Կոր. Էմիլ Լահուտի ջերմ ողջոյնները:

Շնորհաւորելով Ժիպրայիլի դեսպան նշանակումը, նախագահ Քոչարեան գոհունակութիւն յայտնեց քաղաքական մարզէն ներս հայելի-բանանեան յարաբերութիւններու բարձր մակարդակին համար:

Հանդիպումին ընթացքին կողմերը անդրադարձան երկու երկիրներուն տնտեսական փոխգործակցութեան: Նախագահ Քոչարեան եւ դեսպան Ժաւար յատկապէս ընդգծեցին երկու ժողովուրդներուն միջեւ հինէն եկող բարեկամութիւնը: Անոնք դիտել տուին, որ հայելի-բանանեան յարաբերութիւններու վարձացման մէջ մեծ դեր վերապահուած է լիբանանահայ համայնքին: Նախագահը եւ դեսպանը արժարձեցին նաեւ շրջանային հարցեր:

ԶԱԻԱՆՔԻ ՄԷՋ ՇԵՒԱՐՏՆԱԾԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶԸ Կ'ԱՅՑՑԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Ջաւախքի մէջ Վրաստանի նախագահ Լուուարտ Շեւարտնաձէի ներկայացուցիչ Գիլա Կուարացիւնիայի գլխաւորած պատւիրակութիւնը: Քննարկուեցան հայ - վրացական յարաբերութիւններու վարձացման առնչուող հարցեր եւ Ջաւախքի ընկերային - տնտեսական ու մշակութային իրավիճակին վերաբերող խնդիրներ: Վրացական պատուիրակութիւնը նախագահ Քոչարեանին ներկայացուց Վրաստանի մէջ նախընտրական իրավիճակը: Կուարացիւնիա նաեւ յայտնեց, որ Ջաւախքի ուժանիւթի մատակարարման խնդիրներու լուծման համար համաձայնութիւն գոյացած է ուժանիւթի հայկական ընկերութիւններու հետ:

Հանդիպումին ընթացքին կողմերը նաեւ անդրադարձան Հայաստանի սահմանէն մինչեւ Ախալքալաք ճանապարհաշինութեան ծրագրի մը հաւանականութեան:

Կուարացիւնիայի գլխաւորած պատուիրակութիւնը երէկ այցելեց նաեւ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի: Այս վերջինը նշեց, որ Վրաստանի մէջ կայուն վիճակը կը բխի Հայաստանի շահերէն: Իր կարգին, վրացի պաշտօնատարը շնորհակալութիւն յայտնեց հայկական իշխանութիւններուն՝ ուժանիւթի մարզէն ներս համագործակցութեան համար եւ աւելցուց, թէ պարտքերուն վճարման թէ այլ խնդիրները վրացական կողմը կը փորձէ լուծել ամենակարճ ժամանակամիջոցին:

Հայաստանի վարչապետը վերահաստատած է Հայաստանի պարտատուականութիւնը՝ մասնակցելու Ջաւախքի տնտեսական ծրագրին:

Վրացական պատուիրակութիւնը նախանցեալ օր տեսակցութիւն ունեցած էր նաեւ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտասարեանի հետ: Տեսակցութեանէն ետք նշուած էր, որ երկկողմանի յարաբերութիւններուն մէջ չկան եւ չեն եղած անլուծելի խնդիրներ: Կարեւոր նկատուած էր Վրաստանի կայունութեան պահպանումը՝ իբրեւ շրջանային կայունութեան մէկ երաշխիք:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲՈՒՈՆ ՊԱՇԱՆՁԻՆ ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ՝

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

ՅԱԲԵԼԵԱԼ ԶԵՆՆԱՐԿ (ՅԵՐԵԿՈՅՑ)

Շաբաթ, 4 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:30ին, ԵՈՒՆԵՍԵՔՕի սրահին մէջ:

ՍՍԿ՝ 10,000 լ. ոսկի


Հ.Մ.Ը.Ս.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՌԱԶՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ



Հ.Մ.Ը.Ս.Ի Լիբանանի Շրջանային Վարչությունը կազմը երկն այցելեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի: Վարչությունը սրբազան հայրը տեղեկ պատեց իր աշխատանքներուն մասին և պեկուցեց յառաջիկայ ծրագրերուն գծով: Առաջնորդ սրբազանը դրուստեց Հ.Մ.Ը.Ս.Ի գործունեությունը և յատկապես մեր օրերուն աելի քան երբեք անկրթաժեշտ նկատեց անոր յաւելեալ ծաւայումը: Սրբազանը վեր առաւ մեր կեանքին մէջ Հ.Մ.Ը.Ս.Ի որոշիչ դերակատարութիւնը և յաջողութիւն մաղթեց նորընտիր Շրջանային Վարչութեան:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԵՐ Կ'ԱՌՆԵ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ՄԱՐԶԻ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԴԵՐԸ ԵՐԿՐԻՆ ՄԷՁ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտերէկ Պատարտայի մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշէլ Սրմահան, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները և անոնց նկատմամբ Լիբանանի կեցուածքները:



Սրմահան հանդիպումէն ետք շեշտեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է ներլիբանանեան յիմադրելու և երկուստեք շեշտուած է ներքին միասնակաւ: Սրմահան ամրապնդման անհրաժեշտութիւնը՝ զիմադրելու համար արտաքին սպառնալիքներուն: Քննարկումի աւարտէն յարձու: Նաեւ 2004ի պետական պիտուէի նախագիծը, որ մտ օրէն նաեւ պիտի քննարկուի կառավարութեան կողմէ:

Նախագահ Լահուտ անդրադարձաւ իր անդամներուն անհրաժեշտութեան միջոցներուն նախարարութեան շահերը մինչեւ Սեպտեմբերի ամսուան վերջը հասած են 97 միլիոն տոլարի, որ փոխանցուած է էլեմուտքի նախարարութեան՝ Գեղարունական Գրամատան ճամբով: Բննարկումի աւարտէն Կոր. Ռեմոն Ալպար:

ԱՆՁՆԱԿԱՆ ԳԱՍԵՐ
● Բոլոր դասարաններու աշակերտներու համար: Հեռ. 01-260508:
ԱՅՅԵԼՈՒ ՌԻՍՈՒՑՉՈՒՄ
● Բոլոր միւթերը, միջնաճակատ: Հեռ. 03-737921:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
9:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն
10:00.- Անթիլիասի Ս. Գրիգոր ի. ուսուցիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնագրում
12:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն
1:00.- Ազգային - յեղափոխական երգեր
2:30.- Քաղաքական լուրեր/ արաբերէն
2:45.- Յունարէն երգերու ունկնդրութիւն
4:30.- Քաղաքական լուրեր/ արաբերէն
6:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն
8:00.- «All that jazz», ժամերու ընտիր կտորներու ունկնդրութիւն

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՏՈՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:40.- «Առաւօտեան տոմս»
10:05.- «Շոգեւոր խեղ» Մաշտոց վրդ. Զօպանեան ուղղակի ձայնագրում կը ներկայացնէ շաբթուան մտածումը և կը պատասխանէ ունկնդիրներուն հարցումներուն
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
1:30.- Հայաստանեան լուրեր
3:00.- «Ծաղկատան» մանկապատանկան յայտագիր ուղղակի ձայնագրում
4:45.- «Հայ Դատը այսօր»

Նախագահ Լահուտ անդրադարձաւ իր անդամներուն անհրաժեշտութեան միջոցներուն նախարարութեան շահերը մինչեւ Սեպտեմբերի ամսուան վերջը հասած են 97 միլիոն տոլարի, որ փոխանցուած է էլեմուտքի նախարարութեան՝ Գեղարունական Գրամատան ճամբով: Բննարկումի աւարտէն Կոր. Ռեմոն Ալպար:

ՅՐՈՒԻՉ ԿՈՒՂՈՒԻ
Հ. Մ. Ը. Ս. Ի պաշտօնաթերթ «Մարգիկ»ը Պորժ Համուտի և շրջակայ հայաշատ շրջաններուն համար կարիքը ունի կիսամամ աշխատանքով ցրուիչ մը: Հետաքրքրուողները կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 03-720101, 01-266095:

ԿՈՒՂՈՒԻ
● RHODIUM KING հաստ. կարիքը ունի քարտուղարուիչի մը: Հեռ. 01-259914 կամ 03-905224:

ԳՐԱԴՈՒՄՈՐ
ԼԵՅԼԱԿԱՆԻ ՏԻՈՒԹԻՒՆ ՃԱԶԿԵՐՈՅԹ 28 ՆՈՅՏԵՄԵՐ 2003

ՄԱՀԱԶԴ
Տէր և տիկին Սարգիս և Մանուշակ Թորոսեան և զաւակուհի
Տէր և տիկին Մելքոն և Ազնիւ Թորոսեան և զաւակուհի
Տէր և տիկին Վահէ և Աստղիկ Տատուրեան և զաւակուհի
Տէր և տիկին Յարութ և Սիրվա Մխիթարեան և զաւակուհի
Տէր և տիկին Մահմուտ և Լեւոն Փառուազ և զուստոր Տիար Լեւոն Թորոսեան և զաւակուհի
Տէր և տիկին Արա Թորոսեան և զաւակուհի
Տէր և տիկին Պետրոս Գունտազեան և զաւակուհի
Գունտազեան ընտանիք
Նանէճեան ընտանիք
Քէօսէճեան ընտանիք
Քէօզկէճեան ընտանիք
Նաճարեան ընտանիք
Գրիւնճեան ընտանիք
և համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, հօրաբոր, մօրաբոր և հարազատին՝

ՇԱԸԷ ՍԱՄՈՒԷԼ ԹՈՐՈՍԵԱՆԻ (Ծնեալ՝ Տարսոն, 1920ին)
մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 2 Հոկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 5:00ին:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պորժ Համուտի Ազգային գերեզմանատուն:
● Ներկայ ընդունիլ իրիւ մահագոյ:
● Ցաւակոյրիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ջորջ Էյ Պլաթ, «Արաէֆի» շէնք, շրջարկ, բի 8, Ուրբաթ 3, Շաբաթ 4 և Կիրակի 5 Հոկտեմբերին:
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Ս. Նշան Մայր եկեղեցւոյ վերաշինութեան ֆոնտին:

Յատուկ հրաւերով մասնակցել ետք Երոպայի Սրտաբաններու տարեկան համագումարին, որ տեղի ունեցաւ Վիեննայի մէջ և որուն օրակարգին վրայ կը գտնուէին սրտի անհանգստութիւններու բուժման նորագոյն մեթոտները,
ՏՈՔԹ. ԱՐՏԱԶԵՍ ՍԻՍՈՆԵԱՆ (ՄԱՍՆԱԳԵՏ - ՍՐՏԱԲԱՆ)
Կը շարունակէ հիւանդներ ընդունիլ իր դարմանատան մէջ. Պորժ Համուտ, Մար Եուսէֆ Եկեղեցիին դիմաց, Ա. յարկ, ամեն օր, ժամադրութեամբ (հեռ. 01-253434 և 03-265945):

ԲԱՆԵՏԱԴՈՐՈՒՄ
Տեր և տիկին Սերժ և Արին Գալուստեան բախտաւորուած են մանչ զաւակով մը՝
ՊԵՏՕ
3 Հոկտեմբեր 2003 Պէյրութ

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Է ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ
Ձեր դիմաց կը բանայ այս մասնագիտութիւնը՝
Ա.՝ Եթէ հասած էք Թ. դասարան՝ արձանագրուէ Պաքալորիա Ա. դասարան,
Բ.՝ Եթէ տիրացած ես Պաքալորիայի, արձանագրուէ Գոլէճին համալսարանի (T.S.) Ա. տարուան:
Մեր շրջանաւարտները փնտտուած են և կը գործեն Լիբանանի յառաջադէմ վարժարաններու մէջ:
Արձանագրութիւն՝ ամէն օր:
ՄԱՆՕԹ.՝ Նիւթականի պատճառով ոչ մէկ հայ ուսուցիչ պիտի զրկուի իր մասնագիտացումի կարելիութենէն:
Հայ վարժարաններ, որոնք եւս օգտուեցէք ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ մեր շրջանաւարտներէն:
ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ.՝ Տորա՝ հեռ. 01/251320

ՏԸ ՍԻՍՈՒՐՈՒ ԱՅՅԵԼԵՑ ԲՈՐԱՅԹԵՄ՝ ՎԱՐՉԱՊԵՏ ԶԱՐԻՐԻԻ
Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկէ Բորայթի մէջ ընդունեց հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿԻ ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Միսթուրան, որուն հետ քննարկեց տեղական և շրջանային նորագոյն իրադարձութիւնները:
Հանդիպումէն ետք Տը Միսթուրա յայտնեց, որ վարչապետին հետ քննարկած է հարաւային Լիբանանի կացութիւնը: «Կը յուսանք, որ հարաւի կացութիւնը կը մնայ խաղաղ ու կայուն», ըսաւ ան:
Միւս կողմէ, վարչապետ Հարիրի հանրապետութեան միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանիի հետ երկէ Պէյրութի մէջ հիմնարկէր կատարեց Մոհամէտ Ամին մկկիթին, շեշտելով, որ շատով մկկիթը պիտի կառուարի:

ԱՅՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
RENT AND SALE

AT HOME
• Wheelchair
• Walker
• Electric Bed
• Manual Bed
• Water Mattress
• Cans
• Sticks
• Serum Tripod
• Walking Frame
• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՅԱՍՐԱՇ՝ «ԱՐԻՍ» ՍԵՆՏԵՐ
ԳՐԱՍԵՆՏԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԵ, Բ. ՅԱՐԿ
Հեռ. (01) 242556/7
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.
ԻՏԻՐԻ ԿԷԷԷ

معهد بيلوس
للتعليم المهني والتقني
BT
بكالوريا فنية
TS
إمتياز فني
TDS
تكنولوجيا الاختصاص
- منهاج فرنسي. منهاج إنكليزي -
خريجو معهد بيلوس يشكلون ظاهرة حضارية وإقتصادية في لبنان والعالم
كن واحداً منهم
للمراجعة والتسجيل
* فرن الشباك - سنتر أبراج 01/292567
* حارة حريك - طريق المطار 01/274813
* الدورة - بناية الضمان 01/894600
* عين زحلنا - الشوف 05/230 400

Գրական Էջ

ՄԵԾԱՆՈԳԻ ԽՈՐՆՐԴԱԾՈՂԸ

ՔԱՂՅՐԱՀՈՒՆՉ ՉՐՈՅՑՆԵՐ

«Ճամբեզրի գրոյցներ» խորագիրով վերջերս լոյս տեսած Շահանդուխտի նորագոյն գիրքը, որ 20րդ ամուսնի հրատարակութիւնը 1963էն սկսեալ գրագիտուհիին հրատարակած այլաբնոյթ գրքոյկներուն ու հատորներուն ցանկին մէջ, իր նախորդներէն կը գատորոշուի այն յատկանշով, որ լիբանանցի գրողներու հետ շուրջ քառորդ դար առաջ կատարուած գրոյցները ի մի խմբած այս հաւաքածոն կարելի է նկատել լրագրող Շահանդուխտի վկայարանը՝ ինչպէս էին պուրն համոտցի գրողին սրտաբանը Եւ ազնիւ ապրումներուն հանդիսարանը նկատուող «Պուրն Համոտէն կու գամ» գոյգ հատորները:

Եթէ վերոնշեալ երկմաս հատորը հարազատագոյն դրսեւորումն էր Պուրն Համոտն հայաւանին հետ հասակ նետած գրագիտուհիին հայրենակցական-ցեղային պատկանելիութեան ակունքներէն բխած ջերմ ու յուզիչ զգացումներուն, անցեալի երազներուն եւ ներկայի հաստատ համոզումներուն, «Ճամբեզրի գրոյցներ» գիրքը սիրոյ եւ երախտագիտութեան ազնիւ արտայայտութիւն մըն է՝ հանդէպ Լիբանանի եւ ազնիւ հիւրընկալ ու բազմաշնորհ ժողովուրդին: 12 գրոյցներ եւ հանդիպումներ՝ գրականութեան եւ արուեստի 12 տարբեր ներկայացուցիչներու հետ, տեղի ունեցած նախապատերազմեան շրջանին, Լիբանանի արժանաւոր որդիները հայ ընթերցողին ծանօթացնելու նպատակով:

Միխայիլ Նաիմը, Սաիտ Ազի, Մայ Մըր, Օմար Ապու Ռիշէ, Լէյլա Պալպէթի, Ռուպի Ղանէմ, Ժորժ Շաքրուր, Նեփիլ Ժամալէտտին, Ալվարես Պուլուս, Մանուր Շալիքա եւ մինչեւ իսկ պարտաւարան-գուարաբան Նեմիլ Հանքաշ եւ բարոյախօսական-խրատական մակերեսային ներկայացումներ խօսք ու շարժումի վերածած Ապու Մըրիկմ, Էմ Մըրիկմ: 12 անուններ, որոնց Շահանդուխտ լրագրուհին մօտեցած է նոյն խանդավառութեամբ եւ յարգանքով՝ իր հիացական տպաւորութիւնները ընթերցողին հետ բաժնելու ազնիւ տրամադրութեամբ:

Լրագրողի այս անկողմնաւարտութիւնը, քիչ պիտի մնար ըսե՞նք՝ համահասարակ խանդավառութիւնը Շահանդուխտ ապրած է հաւասարապէս՝ քէ՛ Միխայիլ Նաիմի, Սաիտ Ազի, Օմար Ապու Ռիշէի նման դասական հսկայ դեմքերու առիթով, քէ՛ պարագայական փայլատալաններ ապրած Լէյլա Պալպէթիի եւ Մայ Մըրի պէս յարգելի անուններու դիմաց եւ քէ՛ «վաւերական» ախուրսով մկրտուած անանուն ու անվաւեր Ժորժ Շաքրուրի, Նեմիլ Ժամալէտտինի կամ նոյնիսկ հետաքրքրական, բայց լուսաբացային Ռուպի Ղանէմի հետ փոխանակած իր գրոյցներու ընթացքին:

Ըսե՞նք անմիջապէս, որ «Ճամբեզրի գրոյցներ» ու հանդիպումները մանրակրկիտ ընթերցանութիւններու եւ վերլուծական եզրայանգումներու արդիւնքը հանդիսացող խորափափանց երկխօսութիւններ չեն: Անոնք նոյնիսկ չունին դիմացիներ մտածումներու եւ կենսափորձին ընդլայնեցնող ճշմարտութիւնները լոյսին բերող գրոյցներու համապարփակ շունչն ու տարողութիւնը, այսինքն՝ յատկանշիչները եւ նկարագրային մայր երանգները գրական այն սեռին, որ մեր գրականութեան մէջ ճանաչուողի սկսաւ Կարօ Փոլատեանի «Չրոյցներ» հատորներու շարքով եւ գարգացաւ հայրենի մամուլին մէջ՝ վերլուծական-վիճարանական մեկնակետերէ առաջնորդուող երկխօսութիւններով:

Պարզ ըսած՝ Շահանդուխտի գրոյցները լրագրական աշխուժութեամբ, անմիջական ջերմութեամբ, հպանցիկ, բայց բնորոշ արագ դատումներով յատկանշուող սրտի եւ հիացումի երախտագիտական արտայայտութիւններ են, որոնց առաջին արժանիքն ու նպատակը եթէ քաղաքակրթական իր դարաւոր մշակոյթով հարուստ Լիբանանի առարիկի եւ հոչակաւոր դեմքերու մտեմանութեան հայ ընթերցողին հետ բաժնի հանելու հեղինակին նախանձախնդրութիւնն է, երկրորդը, անտարակոյս, հաստատ ու լուսաւոր մշակութային նոր կամուրջներ հաստատելու Շահանդուխտի պայծառ որոշումն է: Նոյնիսկ օրաթերթային սուղ ծաւալով սահմանափակուելու պարտադրուած կարճ գրոյցներին կարելի չէ հեռու պահել հատորի գլխաւոր արժանիքներէն հանդիսացող հետաքրքիր արուեստագէտի աշխարհայեացքն ու մտաւորական հասունութիւնը, որովհետեւ Շահանդուխտ քաջ գիտէ, քէ ազգերու անմահ գաւակներուն արժէքը ու ինքնազոյժմ էութիւնը ճանաչելու ամէնէն ուղիղ եւ կարճագոյն ճանապարհը մշակութային կապն է, զի մացիսիցի շարքը սեփական ջուրին մէջ լուծելու, անով յաւելեալ քաղցրութիւն ու համ ստանալու, գայն իւրացնելու իմացական հմտութիւնը:

Մաշտոցեան քաղաքակրթական հետախուզութեամբ նամբայ ելած, նոյնիսկ պատմական դժնդակ պայմաններու մէջ կանգ չառած եւ սերունդի առ սերունդ ալ աւելի ճիւղաւորուած այս մշակութային աւանդէն ու գիտակցութեան անաշխարհուած՝ գիր ու սիրոյ կերպարանք ստացած են միայնիներու շուրթին ծաղկած նամբեզրի հպանցիկ գրոյցները, որպէսզի «Ձեր Նարեկացիին, Շէյքսպիրի մեր» դառնգալ մշակութային մեծ ներդրումները մշակուողները պարզապէս ամբողջական շքեղութեամբ, գրաւորութեամբ եւ հմայքով:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Մեր տեղերը գրաւել է ետք, պահ մը լուռ-թիւն կը տիրէ: Աչքերս կը դեզերին պատերէն կախուած գեղանկարներուն վրայ: Բայց հարկ է սկսիլ գրոյցը: Ուրկէ՞ եւ ո՞ր նիւթով սակայն...: Բարեկամուճհիս գրոյցին թելը կը բռնէ բանաստեղծին մասին, անոր գրականութեան շուրջ մանրակրկիտ ծանօթութիւններ տալով, առանց մոռնալու, որ Պասքինթա հպարտ է իր գաւակով...: Ապա կրկին լուռութիւն: Ինծի այնպէս կը թուի, թէ ընկերակցուճհիս սպառած է իր նիւթը: Ես կը խզեմ լուռութիւնը:

Նորոգապաշտ դպրոցին հարազատ հետեւորդ մը կը թուիք ինծի - ճի՞շդ է արդեօք բնորոշումս:

Տեսանելի գոյուցիւնները արդէն ըմբռնելի են ու շօշափելի, բոլորին կողմէ: Հարկ է թափանցել ներքին աշխարհին, մտնել հոգիներուն մէջ:

Ներկայիս ի՞նչ կը գրէք:

Ձեռնարկած եմ նոր գիրքի մը, - կ'ըսէ կարճ ու կտրուկ:

Ի՞նչ է նիւթը:

Նիւթը... Այդ մասին ոչինչ կրնամ ըսել, որովհետեւ վերջնական ձեռք մը մէջ չեմ ընթերցում տակաւին:

Անգլերէնով դրել կը նախընտրէք, թէ՞ ձեր մայրենի լեզուով:

Նիւթեր կան, գորս անգլերէնով դրել կը նախընտրեմ:

Երկարատեւ Միացեալ Նահանգներ ապրած էք. ի՞նչ է ձեր տպաւորութիւնը այդ մեծ երկրին մասին:

Այո՛, քան տարի ապրած եմ Ամերիկա, գտնուած եմ նաեւ աշխարհի տարբեր անկիւնները, սակայն Լիբանանէն գեղեցիկ երկիր մը չեմ գտած: Եթէ Լիբանանէն լաւ վայր մը գտնէի՝ ընկանաբար պիտի չվերադառնայի: Ասիկա կ'ըսեմ ոչ թէ անոր համար, որ Լիբանան հայրենիքս է, այլ որովհետեւ Լիբանան իրապէս գեղեցիկ երկիր մըն է, արեւաշատ, հաճելի կլիմայով, իր հովասուն լեռներով, ջրառատ գիւղերով, իր յորդ պարտէզներով, մրգատաններով, իր ծովով ու բնութեան շնորհած բոլոր բարեքներով: Ինծի համար, Լիբանանը այն միակ երկիրն է, ուր կարծէ ապրիլ:

Լիբանանի գեղեցկութիւնը ցայտուն դարձնելու համար բանաստեղծաշունչ ըրանա-

ձեւ մը կ'արտասանէ, շատ մեղմ եւ հազորդական շեշտով:

Լիբանան քաղաքակրթութեան կեդրոն եղած է, երբ աշխարհ խաւարի մէջ էր: Հպարտ եմ, որ Լիբանանի այս գիւղին գաւակն եմ ...

Բացի գրականութենէն, արուեստի ո՞ր ճիւղը կը նախապահէք:

Գծուար է համեմատութիւն մը ընել. բոլոր արուեստներն ալ սիրելի են ինծի. երաժշտութիւն, նկարչութիւն, ճարտարապետութիւն: Ժամանակին նկարած եմ, բայց հետեւողական աշխատանք չեմ կատարած այդ ուղղութեամբ: Կեդրոնացած եմ գրականութեան վրայ: Երաժշտութիւնն ալ շատ կը սիրեմ:

Բացի Ամերիկայէն, ո՞ր երկիրներու մէջ գտնուած էք:

Եւրոպայի ամբողջ: Խորհրդային Միութիւն գտնուած միջոցիս հետաքրքրուեցայ Հայաստանի մասին: Ըսին, թէ Հայաստան գեղեցիկ երկիր մըն է: Երեւանը լուսաւոր մայրաքաղաք մը, աշխարհին հետ մրցելու կարող: Փափաքեցայ այցելել, բայց ժամանակ չունէի:

Կարճ լուռութենէ մը ետք, գրոյցին նիւթը կը փոխուի եւ կը ստանայ ընկերային ու հոգեբանական գոյն: Ներկայացող առիթը յարմար նկատելով՝ կը հարցնեմ:

Ինչո՞ւ չէք ամուսնացած ...

Որովհետեւ ասպարէզս թոյլատու չէր: Ձէի կրնար պէտք եղած չափով հետաքրքրուել կնոջմովս, գործի ընտանիքովս: Եղբայր մը ունի ամուսնացած: Ու այս երիտասարդուհին եղբորս աղջիկն է. ան՝ որ ձեզ ընդունեց:

Երիտասարդուհին արդէն սուրճ կը մատուակէր մեզի: Ան կը փայտի:

Ի՞նչ կարծիք ունիք կիներու մասին: Ոմանք կ'ինքնը կը համեմատեն սատանաներու հետ... Արդ՞ա՞ր է այդ որակումը:

Երբեք: Ես մեծ յարանք ունիմ կիներու հանդէպ: Այլը առանց կնոջ կ'իստատ գոյութիւնն ըմբ է: Կ'արժէ կնոջ հոգիին թափանցել, լաւ ճանչնալ զինք: Մարդիկ կան, որոնք կնոջ մէջ կը տեսնեն միայն մարմինը, միայն... Պարբերաթերթերու եւ լրագիրներու լայնքին ու երկարքին փուռած մերկ կ'ինքն ու նկարները կ'ինքն չեն ներկայացնել իր ամբողջութեամբ: Կ'ինք միայն ֆիզիքական ներ-

կայութիւնն չէ, այլ՝ ոգի է, առանց որուն գայն ճանչնալ, անոր ներաշխարհին թափանցել կարելի չէ...

Արդէն ժամ մը անցած էր, բայց մեծ մտածողին հաղորդականութիւնը մեզ կը քաջալերէր: Մեր աչքերը կրկին մտածողին պատերէն կախուած նկարներուն, նոր հարցումներ կ'որոնէինք, մինչ ան ծանօթութիւն կու տայ նկարներուն մասին: Մատով ցոյց տալով երկու նկար՝ կ'ըսէ:

Այս երկու գեղանկարները ձգարան խալիլի ստեղծագործութիւններն են. հաւնեցա՞ք:

Այդ ուղղութեամբ երբ հարցումներ կ'ուղղեմ, Նաիմէ կը պատասխանէ:

Ձգարան խալիլ ձգարան որքան մեծ բանաստեղծ, նոյնքան տաղանդաւոր գեղանկարիչ մըն էր. սքանչելի նկարներ ունի: 15 տարի բարեկամութիւն ըրած եմ հետը: Հանճարեղ մարդ էր:

Բայց շուտ կորսնցուցի՞նք, - կ'ըսէ բարեկամուճհիս յուզումով:

Այո՛. չարաչար կ'աշխատէր, գիշերներ կը լուսննէր եւ անյազ կը խմէր, ինչ որ քաջայայտ իր առողջութիւնը, եւ հագիւ 47 տարեկան՝ մահացաւ:

Չէ՞ք կարծե՞ք, որ մարդոց սահմանուած օրերը քիչ են. հասունութեան հազիւ հասած՝ կ'հետանան այս աշխարհէն, առանց իրագործելու իրենց տաղանդը, առանց կենսագործելու իրենց փորձառութիւնը:

Ով գիտէ ձգարան խալիլ դեռ որքա՞ն ըսելիք եւ ընելիք ունի՞ր ...

Կենսիկ տարօրինակ երեւոյթներու շուրջ տեսակէտներ տալով, զգացի՞նք, թէ իրապաշտ մարդն է Միխայիլ Նաիմէ, միշտ ընդունող ճակատագրի խաղբեր:

Իմաստուն դրագէտին խօսքերը մեր ակնշնչին մէջ կը դրոշմուեն: Լուռ կ'ունկնդրենք զինք, որ քիչ ետք հարցումներ կ'ուղղէ հայ ժողովուրդի մասին ընդհանրապէս, ու մեր մամուլին եւ գրականութեան մասին՝ մասնաւորապէս: Կը պատասխանան մտտ պատշաճի, ապա հրաժեշտ կ'առնենք զրագէտն, որ փափաք կը յայտնէ կրկին հանդիպելու:

Ահալս ուս սահլս, - կը կրկնէ՝ կրկին տեսնելու քաղաքները շեշտելով: Կը խոստանամ ու հրաժեշտ կ'առնեմ այնքան համարկելու անձնաւորութիւնէն, վերադարձի ճանապարհին խոկալով իր մեծութեան մասին:

ԲԱՆԱՍՏԵ՞ՂԾ, ԹԷ ԻՇԽԱՆ

Բաւական ծանր ու դասական կը հնչէ Օմար Ապու Ռիշէի անունը: Կը պատկերացնէի զինք իբրեւ միջնադարի, գիրուկ ու ճանաչող մարդ մը՝ ծանրախոհ եւ անժպիտ: Անուններու մասին հետաքրքրական սահմանում մը կատարած է Յակոբ Պարոնեան, նշելով, թէ հին ու կոշտ թուացող անունները, ինչպէս՝ Աբիսողոմ, Պաղտասար եւ պիտի ու մաշած: Փապայանը պարտքի հաց չի տար անոնց, ոչ ալ նպարավաճառը՝ ապակի գնում ... Մինչդեռ՝ նուրբ անուններու տէրերը յարգանք կը վայելեն ընկերութեան մէջ, եթէ նոյնիսկ ստախօս ու խարբեղ ըլլան անոնք:

Երբ կը բացուի Օմար Ապու Ռիշէի բնակարաննի դուռը, զիս դիմաւորողը կ'ըլլայ բարձրահասակ, դէմքի նուրբ գիծերով, անձնազանդի տիպարով, անձնաւորութիւն մը՝ միջին տարիքի երիտասարդութիւն մը յայտնաբերող: Կ'ենթադրեմ, որ սիրալ գուռ մը բախած եմ, տրուած ըլլալով որ մենք բանաստեղծները կը պատկերացնենք քիչ մը անփոյթ արտաքինով, տերվիշանման տիպար մը, մանաւանդ երբ արեւելքի է ան:

Արդեօք կը սխալի՞մ, - կ'ըսեմ շփոթած եւ կ'աւելցնեմ, - Պարոն Ապու Ռիշէի տունը կը փնտռեմ:

Ես եմ, հրամայե՛ք, - կը պատասխանէ ժպտուն, առաջնորդելով զիս լայն դահլիճ մը՝ զէպի գիրքերով յորդուն գրասենեակ մը:

Գրադարանին մէջ կան գեղատիպ կազմով հատորներ, որոնց վերեւ «Թապալտներու շարք մը եւ ստոնց շուրջ հնդկական ու չինական ոճով գեղորդներ, իրեր, փսխներ, սկրուտեղներ եւ մանաւանդ՝ արձանիկներ:

Երբ կը նկատեմ, որ նայւածքս կը դարձնեմ արւեստի գործերուն վրայ, բանաստեղծ Օմար Ապու Ռիշէ կը սկսի մէկ-մէկ բացատրութիւններ տալ:

Ասիկա Պուտոտան է: Սա միւս արձանը՝ Նեհրուս: Այս մէկը ունի Բ. Ա. 2000 տարուան հնութիւն: Ձիւնուորի մը գլուխն է, գտնուած է Հնդկաստան: Նուիրեցիկ գայն ինծի: Այս վաճար ունի հնագիտական մեծ արժէք:

Աչքերս կը շլանան այնքան առատ արուեստի գործերուն գարմանալի երեւոյթէն: Կարծես ոչինչ կը տեսնեմ շուրջս ... Արբեցնող ուժ մը ունին արուեստը: Մինչ կը մտածեմ. բանաստեղծ ըլլալ եւ այսքան ճոխ արուեստի գործերու տէր՝ նոյն ատեն՝ կարելի է մրցիլ արքայական պայտի մը գանձերով եւ արուեստի հարստութեամբ ...

Ոտքի է ինք: Կը հետեւի գարմանքիս: Նոյն ատեն պատրաստ է դասախօսի գործերուն լուսաւորութիւն իր աշակերտներուն միտքերը ... Աթոռ մը ցոյց կու տայ եւ կը հրաւիրէ զիս նստելու՝ մանրամասնութիւն մը տալով:

Այս աթոռին վրայ աւելի հանգիստ կը նստիք: Խնդրեմ հոս նստեցէք: Ձեր համբար ծանօթ է աշխարհին, Արեւելքէն

Արեւմուտք: Կ'ուզենք մօտէն ծանօթացնել ձեզ նաեւ մեր ընթերցողներուն:

Որքեմն հա՞յ էք:

Այո՛:

Օ՞, հայերը մեր լաւ բարեկամներն են: Ես հայեր տարիքէս, Սուրիոյ գիւղերուն մէջ եւ Հայէպ, Առաջին Աշխարհամարտի տարիներուն: Հայրս շատ օգնեց գաղթական հայերու, պահեց գանձեր: Անոնցմէ կը յիշեմ աղջիկ մը, որ կը կոչուէր Էլմաստ Մարը:

Յետոյ ամուսնացաւ Պալան մականունով երբ տասարդի մը հետ: Կարծեմ Ամերիկա կ'ապրին: Հայրս իր գրականէն բաւական գունարներ տրամադրեց օգնելու համար տարագիր հայերու: Ես կը սիրեմ հայերը:

Երկարատեւն է ի վեր կը փնտռեմ ձեզ: Ըսին, թէ Հնդկաստան դացած էք:

Հրաւիրուած էի: Գացի դասասուլութիւններ տալու: Մասնակցեցայ նաեւ միջազգային համագումարի մը, որ տեւեց չորս օր: Նիւթն էր՝ «Մարդկայնութիւն»:

Ի՞նչ նիւթերու շուրջ դասասուցիք:

Դասասուցիք թիւն է սէրը՝ նիւթին եւ Օրոպիանտի փիլիսոփայութեան մասին: Ելոյթները ներքինն են: Հնդկաստանի պատկերասփիւռէն:

Ի՞նչ է ձեր տպաւորութիւնը հնդիկ ժողովուրդին:

Լաւ տպաւորուած եմ: Ընդհանրապէս հոգեւոր կանքներ արժէք տուող ժողովուրդ մը եղած են:

Գրական ո՞ր սեւը կը հետաքրքրէ ձեզ:

Բանաստեղծութիւն: Կ'ինք մէջ չէ, այլ հոս է:

Ես միայն բանաստեղծութիւն գրած եմ:

Ձեր թեման:

Կինը, սէրն եւ քաղաքակրթութիւնը:

Յարգ քանի՞ գիրքեր հրատարակած էք:

(Նշենք, քէ այս հարցազրոյցը կատարուած է 1973ի Փետրուարին):

Բազմաթիւ հատորներ:

Կրնա՞ք քանի մը անուններ տալ ձեր գիրքերէն:

«Ջրիեղի», «Սեմիլիս» իմ գիրքերս ընդհանրապէս անուշադի չուսին: Զանոնք կը խորագրեմ «Մին Օմար Ապու Ռիշէ»:

Անունս կը զննեմ պարզապէս:

Ի՞նչ նպատակի կը ձգտէք ձեր գրականութեամբ:

Կը զգուշանամ զիս: Եթէ մտածում մը չէ համոզելու գիտ, այդ մասին չեմ գրիր:

Ուրկէ՞ կը ստանաք ձեր ներշնչումը:

Որեւէ մտածում կը ներշնչէ զիս: Կը գրեմ այն բոլորին մասին, որոնք մտածել կու

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ




Համացանցին վրայ դիրքերում կարելի է գտնել հայ բանաստեղծության մեծերը եւ փոքրերը, կարգալից անոց քերթումները եւ ծանօթանալ անոց կենսագրությանը:

Ստորեւ տրուած կայքերու փունջը կը դիրքացնէ ընթացողներու հանդիպումը հայ բանաստեղծներուն հետ:

- www.users.freenet.am/poetry - կայքը կ'ընդգրկէ 42 հայ բանաստեղծներու գործերէն ընտրանիներ: Անոնց կարգին են՝ Զօպանեան, Էմին, Զահարատ, Մուշեղ Իշխան, Շիրազ, Պարոյր Սեւակ, Կապուտիկեան, Շուշանեան, Իսահակեան, Վարուժան, Խրախունի, Համաստեղ, Մեծարեան, Թումանեան, Տէրեան, Զարիֆեան, Թէքեան, Դուրեան, Դաւոյեան եւ Սիւսանթո:
- www.armenianpoets.com

Արդիական ձեւաւորումով եւ կառոյցով այս կայքը իր սեակին մէջ իւրայատուկ է: Առանձին բաժիններով ներկայացուած են Սեւակի («Նիգիլի Լոյս»), «Անլուր-ուրի Զանգակատուն»), Վարուժանի («Սարսուռներ», «Ցեղին Սիրտը», «Հեթանոս Երգեր», «Հացին Երգը»), Մեծարեանի («Բարսիւմներ»), «Միտան», «Նոր Տաղեր», «Բանաստեղծութիւններ»), Դուրեանի, Սիւսանթոյի («Դիւցանորէն»), «Հայրգիներ», «Հոգեվարքի եւ յոյսի Զահեր», «Կարմիր լուրեր բարեկամէս», «Սուրբ Մեսրոպ») եւ Թումանեանի («Կարմիր գիրքը», «Մարդկութիւն» եւ անտիպներ) երկերը: Տակաւին պատրաստութեան ընթացքի մէջ են Էմինի, Շիրազի եւ



Չարեանի երկերուն յատկացուած բաժինները:

- www.armenian-poetry.netfirms.com - կայքը կ'ընդգրկէ 21 հայ բանաստեղծներու գործերէն թարգմանութիւններ (Ֆրանսերէնի):
- www.iatp.am/armenians/eyes/index.htm - Հայու աչքերուն նուիրուած բանաստեղծութիւններու փունջ մը:
- www.iatp.am/resource/artcult/zohrab/armzoh.htm - Գրիգոր Զօհրապի երկերը եւ կենսագրականը: Հետաքրքրական է նորավայրի իշխանի բանաստեղծութիւններուն բաժինը:

- http://freenet.am/tigran/poetry/duryan - Պետրոս Դուրեանի նուիրուած այս կայքը կ'ընդգրկէ անոր երկերը, կենսագրական գործերը, եւ վաղամեծիկ բանաստեղծի ձեռագիրէն նմուշներ:
- www.umd.umich.edu/dept/armenian/literatu - Հայ բանաստեղծներու քերթումներ՝ անդլերէնի թարգմանումով:
- http://lastak.port5.com/reading-hall/charents - Եղիշ Զարեանի երկերը ներկայացնող ընդարձակ կայք:
- www.groong.com/tlg - «Գրական կուռնիկ»ի կայքը, ուր ներկայացուած են արդի հայ բանաստեղծներու անդլերէն ստեղծագործութիւնները:
- http://iatp.r.am/sites/garoun - «Գարուն» գրական ամսագրութի կայքը:
- www.netarmenie.com/culture/poesie - «Ննթ Արմէնի» ֆրանսատու կայքի հայ բանաստեղծութեան յատկացուած բաժինը:


ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողները կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:


ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

ԱՆԳԼԻԱԳԻՐ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՅՐ՝ «ԳՐԱԿԱՆ ԿՈՒՐՆԻԿ» ԿԱՅՔԸ

Բանաստեղծութիւնը, կ'ըսէ Շէլլը, քողը կը վերցընէ աշխարհի պահուած գեղեցկութեան վրայէն, եւ այդպիսով ծանօթ իրեր մեզ կը թուին անծանօթ: Ծանօթ իրեր քողագրծելով, գանձը անծանօթ դարձնող բանաստեղծները, ըլլան անոնք վաստակաւոր գործընթացի իրենց գրած տողերը բարեկամներու կարգալից բաւարարողները, «յանձին» համացանցին գտած են նորագոյն միջոց մը իրենց ստեղծագործութիւնները բոլորին հասողութեան տակ դնելու: Արդարեւ, համացանցին վրայ գտնուող ըզգայութիւնը



ծութիւն մը կ'ընտրէ եւ կը տեղադրէ կայքին մէջ՝ ներկայացնելով նաեւ տուեալ հեղինակին կեն-



կան խմբակներ եւ բանաստեղծութիւններ ներկայացնող կայքեր առիթ կ'ընծայեն բանաստեղծներու, որ գրական գործեր տեղադրեն իրենց կայքերուն մէջ: Այս կայքերուն ամէնէն նշանաւորներէն մէկը կը հանդիսանայ www.poetry.com, որ ոչ միայն միլիոնաւոր բանաստեղծներու ձայնը լսելի կը դարձնէ, այլեւ լաւագոյն գրութիւնները կը հրատարակէ առանձին հատորներով եւ նիւթական մրցանակներ կը տրամադրէ դատական կայքերու կողմէ ընտրուած լաւագոյն քերթուածներու հեղինակներուն:

Յատկանշական է, որ www.poetry.com-ի նման կայքերու մէջ բազմաթիւ հայեր, աշխարհի բոլոր կողմերէն, իրենց բանաստեղծութիւնները տեղադրած են եւ երբեմն կը գտնուին մրցանակակիրներու կարգին, եւ իրենց գործերը կը հրատարակուին:

Դժբախտաբար նման գործունէութիւն տանող կայքեր կը բացակային հայկական իրականութեան մէջ: Սակայն աշխարհի տարածքին անդլերէնով ստեղծագործող հայ բանաստեղծներ քով-քովի բերելու յատկանշական եւ ողջունելի աշխատանք կը տանի «Կուռնիկ» կայքը (www.groong.com), որ «Գրական կուռնիկ» անունով առանձին բաժին մը տրամադրած է այս նպատակին համար (www.groong.com/tlg): «Գրական կուռնիկ»ի խմբագիր Գրիշ Դաւթեան իւրաքանչիւր շաբաթ (նախապէս՝ ամսական դրուութեամբ) բանաստեղ-

նութեամբ, եւ յաճախ՝ ստեղծագործական սլացքով: «Գրական կուռնիկ»ին մէջ գործեր ունին Տիւնայ Տէր Յովհաննէսեան, Քնարիկ Մեմէջեան, Շուշան Աւագեան, Սագօ Արեան, Գրիշ Դաւթեան, Ստեփան Պիւլիպիւսեան, Պետրոս Աֆէկեան, Ալլա Թադեանց, Գէորգ Գալստեան, Հելլէն Փիլիպոսեան, Արա Պալիտեան, Ամիր Պարաք, Արմենուհի Միլիտեան, Ստա Մարգարեան, Խաչիկ Մուրատեան, Նիքոլ Վարդանեան, Արա Արզումանեան, Դեմոն Քրիստիան, Պօղոս Արթիւրեան եւ Ռազմիկ Արապեան:

Ստորեւ կը ներկայացընենք կայքին մէջ տեղ գտած բանաստեղծութիւններէն մէկը, որ ուշագրաւ իրենց արծաթած նիւթերու այլազան Յեղասպանութեան.

LEGENDARY WRATH
Are their pitiful shrieks still reverberating
In the burned-down churches of Armenian towns,
O Lord?
Is their unclotted blood still seeping
In the soil of our desecrated lands?
Are a million ghosts haunting the very homes
In which their physical twins were massacred,
O Lord?
Is the earth shaking under the feet of murderers
And toppling their dwellings on their heads?
Are the heavens raining fires to chastise
Earthlings so blind to injustice?
Where is your legendary wrath, O Lord,
For the horrible deeds of the Ottomans?

ՎԵՐԱՍՈՒՏ

ԲԱՐԸ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ
Պուրճ-Համուտ հեռ. թիւեր: 260533 - 260534 - 266822

- 2003-2004 տարեընթացի արձանագրութիւնները նախկին Եւրոպայի համար սկսած են եւ կը շարունակուին հաստատութեան գրասենեակին մէջ:
- Նորիկ աշակերտներ, որոնք սովորական վարժարաններու մէջ կարող չեն իրենց դասերուն հետ քայլ պահել, եւ սորվելու տկարութիւն եւ կամ դժուարութիւն կ'ունենան, կրնան արձանագրութեան դիմում կատարել եւ ընդունուիլ, յետ հոգեբանական եւ մանկավարժական քննութիւններու, որոնք ձրիաբար կը կատարուին հաստատութեան մէջ:
- Հայ վարժարաններու աշակերտներ որոնք լեզուական, հոգեկան, մտային եւ ուսումնական դժուարութիւններ կ'արձանագրեն դպրոցական տարեընթացին, կրնան նաեւ դիմել ԲԱՐԸ, որպէսզի յարմար ու մասնագիտական լուծում մը տրուի իրենց հարցերուն:
- Օրոքարի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններու համար:
- Վերամուտ: Դասաւանդութիւնները կը սկսին Հինգշաբթի 2 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 8:00ին:

ԲԱՐԸԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

«ՖՈՐՈՒՄԸՐՏ»

Ե-համակներու փոխանակումը վերածուած է մշակոյթի: Համակարգիչ օգտագործողներ ոչ միայն անհանգստան կամ աշխատանքային բնոյթի ե-համակներ կ'ուղարկեն իրարու, այլ նաեւ իրենց ծանօթներուն հետ կը բաժնեկցին հետաքրքրական կայքեր, լուսանկարներ եւ գրութիւններ: «Ֆորումըրտ» անունով կը կրող այս ե-համակները յաճախ «բաց» կատակներ կ'ըլլան, իսկ երբեմն՝ իմաստալից գրութիւններ:

- «Բաց» կատակները պահելով ե-համակատուփին մէջ՝ ստորեւ բարգմանաբար կը ներկայացնենք շահեկան գրութիւն մը, որ «կը դեգերի» համացանցին վրայ:
- 10 տարիներու արժէքը հարցն'ը նոր ամուսնալուծուած զոյգի մը:
- 4 տարիներու արժէքը հարցուր նորաւարտ ուսանողին:
- Մէկ տարուան արժէքը հարցուր ամապերջի քննութեան ձախողած աշակերտին:
- Մէկ ամսուան արժէքը հարցուր կանխածին մանուկ ունեցած մօր:
- Մէկ շաբթուան արժէքը հարցուր շաբաթաթերթի մը խմբագիրին:
- Մէկ ժամուան արժէքը հարցուր հանդիպման պահը սպասող սիրահար զոյգի մը:
- Մէկ վայրկեանին արժէքը հարցուր շոգեկառքը, օթոքարը կամ օդանաւը փայտուցած անձին:
- Մէկ երկվայրկեանին արժէքը հարցուր արկածէ մը փրկուած անձին:
- Մէկ հազարերորդ երկվայրկեանին արժէքը հարցուր Ողիմպիական խաղերուն արծաթ մետալ շահող մարզիկին:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ



Համացանցային Չրոյց - 18 տարեկան սարգիկ մըն են, նախապարտիւններ են փիլիսոփայութիւնը, լողը եւ բոնգրաւարը...

Պատրաստե՛ք՝ ԽԱԶԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

«ՀԱՅ ԱՆՈՒՅԻՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՆ ԵՐԱՅՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Հայ Առաքելական Եկեղեցւոյ Եղբայրակցութիւն»ը քաջալերուած իր երկամայ ծառայութեան, Ս. Աստուածածին մատրան մէջ (Պիքֆայա), կազմակերպած է հոգեկան տրեւմանքով վեցամսեայ ծրագիր մը, Սեօի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Զինուորական Դաստիարակութեան Բաժնումունքին եւ Դարբնակարանի տեսչութեան գործակցութեամբ:

Յայտագիրը կ'ընդգրկէ երաժշտութիւն, աղօթքներ, վկայութիւններ, դասախօսութիւն եւ գրոյց: Դասախօսութիւնները պիտի վարեն Սեօի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան հայրերը, երկու շաբաթ անգամ մը, Չորեքշաբթի օրերը, երեկոյեան ժամը 8:00ին:

Սիրով հրաւիրուած էք ներկայ գտնուելու սոյն հոգեւոր երեկոյեան բացման հանդիսութեան երաժշտական յատուկ յայտագրին, որ պիտի ներկայացնէ «ՕՐԿԵՏԻՐ» նուագախումբը, կատարողութեամբ՝ ՍԱԼԲԻ ԲԵԼԵԾԵԱՆԻ, Շաբաթ 4 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան շրջափակին մէջ:

Մանկապատանեկան

Ինչի՞ կը ծառայի ԴՊՐՈՅ ԵՐԹԱԼԸ...

Գյուրացական օրուան մը ընթացքին դուռն արդարև ուղղադարձի, բուրբանուրի, պատմութիւն: Երբեմն դուռն քեզի հարց կու տաս, թէ այս ամէնը ինչի՞ կը ծառայի, եւ այն տպաւորութիւնը ունիս, որ դպրոցը միայն կը սորվիս, կը սորվիս, կը սորվիս... Սակայն դպրոցը կը ծառայի նաեւ ուրիշ բանի: Օրինակի համար...

Կամ ուսուցչուհին հարցումներուն պատասխանելով:

- Մտածել՝ գտնելու համար պատասխանները մեր մտքին մէջի հարցումներուն:

- Յստակ կերպով արտայայտուիլ, որպէսզի մեր շուրջինները մեզի աւելի լաւ հասկնան:

- Կարգապահութիւն՝ առանց ժամանակ կորսնցընելու աշխատելու համար եւ զբաղումի ժամանակ յատկացնելու համար:

- Աշխարհը հասկնալ՝ սորվելով գայն աւելի լաւ ճանչնալ եւ գայն ուսումնասիրել:

- Չափահասները ապշեցնել՝ անոնց պատմելով մեր բոլոր սորվածները, զորս անոնք երբեմն մոռցած կրնան ըլլալ:

Մենք բոլորս կրնանք սորվիլ, հասկնալ, յաջողիլ եւ շուրջինները գարմացընել:

Մեր ժամանակը առնել սորվելու համար, որովհետեւ ամէն ինչ մէկ օրէն չենք կրնար սորվիլ:

Մենք սխալներ կ'ընենք, յառաջդիմութիւն կ'արձանագրենք եւ կամաց-կամաց կը սորվինք մտածել, ինչպէս որ մանուկները քաջիկ կը սորվին:

Ինքզինքին հաճոյք պատճառել, օրինակի համար, գոց սորված բանաստեղծութիւն մը արտասանելով, ընկերոջ մը վարժութիւն մը բացատրելով:

- Ընկերներ ունենալ, զբօսանքի ընկերներ, տարուան ընկերներ կամ ամբողջ կեանքի ընկերներ:

- Սորվիլ գիրքը յարգել, որովհետեւ մենք ստիպուած չենք բոլորը սիրելու, սակայն մենք գիրքը պէտք է յարգենք՝ միասին աւելի լաւ պարելու համար:

- Սորվիլ բիրտ չըլլալ, որովհետեւ եթէ մենք կ'ուզենք բոլորս միասին ապրիլ, պէտք է սորվինք վիճաբանիլ, քան՝ կռուիլ:

- Գաղափարներ փոխանակել նորոյթի, շարժապատկերի եւ գիրքերու մասին, կամ նաեւ՝ մեր մտքին մէջ ունեցած հարցումներուն մասին:

- Սորվիլ իրարու բաժնեկից ըլլալ, իրարու հետ ըմբռնելով խաղերը, նախաճաշը, մինչեւ իսկ երազները եւ ծրագրերը:

- Սորվիլ օրէնքներու հետեւիլ, որովհետեւ եթէ մեզմէ իւրաքանչիւրը իր ուզածը ընէր, քոստ մը պիտի ստեղծուէր:

- Սորվիլ իրարու օգնել, որովհետեւ բոլորս ալ կրնանք պատիկ հարց մը ունենալ, եւ երկու հոգիով աւելի դիւրին կ'ըլլայ անոր մասին մտածելը:

Միշտ դիւրին չէ միասին ապրիլը: Միասին ապրիլը բան մըն է, որ կրնանք նաեւ դպրոցը սորվիլ:

ԸՐՑԱՐԱՆ

ԱՐՉԱԿՈՒՐԴ, ԹԷ ԴՊՐՈՅ



Կարգ մը մարդոց համար արձակուրդները միշտ հանելի պահեր չեն... Իսկ ուրիշներու համար դպրոցը հումանիշ է ձանձրոյթի: Իսկ դուռն ի՞նչ կը նախընտրես. արձակուրդ, թէ դպրոց:

1) Ի՞նչն է, որ վերամուտին, քեզի աւելի մեծ հաճոյք կը պատճառէ:
 + - Ընկերները վերստին տեսնելը:
 x - Նորութիւնը:
 -- Նոր տեսարկներուն հոտը:

2) Ի՞նչն է, որ նուազ կը սիրես վերամուտին վերաբերելով:
 -- Գիրքերու կողմ անցնելը:
 + - Մանօթանալ տարուան դիրքերուն:
 x - Դպրոցի պայուսակին ծանրութիւնը:

3) Նախ եւ առաջ ի՞նչ կը գրես նոր նոթատետրիդ մէջ:
 x - Անունդ, հասցէդ եւ այլն:
 -- Ժամանակացոյցդ:
 + - Կ'արձանագրես արձակուրդի օրերը:

4) Եթէ դուն նախարար ըլլայիր, դպրոցի ի՞նչ ժամանակացոյց պիտի առաջարկէիր:
 -- Դպրոցը կէս օր՝ ամբողջ տարուան ընթացքին:
 + - Դպրոցը՝ թղթակցութեամբ:
 x - Ամիս մը դպրոց, ամիս մը արձակուրդ:

5) Երբեմն կը ձանձրանաս արձակուրդին ընթացքին:
 x - Ժամանակ մը ետք, եթէ միշտ նոյն տեղը մնաս:
 + - Երբեմն առտուն, երբ ամէն մարդ քնացած կ'ըլլայ:
 -- Յաճախ արձակուրդին սկսելէն երկու շաբաթ ետք:

6) Երբ արձակուրդը իր աւարտին կը հասնի...
 -- Կը փորձես զբաղելու միջոցներ գտնել, մինչեւ որ արձակուրդը վերջ գտնէ:
 x - Կը փորձես այդ վերջին օրերէն օգտուիլ ամէնէն լաւ ձեւով:
 + - Չես ուզեր մտածել:


7) Ծիւղ վերամուտէն առաջ կ'ուզես գիտնալ...
 + - Թէ բոլոր ընկերները պիտի վերադառնան:
 -- Ո՞վ պիտի ըլլան ուսուցիչները:
 x - Ի՞նչպէս պիտի լեցնես պայուսակդ:

8) Ի՞նչ թուղթով պիտի ուզէիր ծածկել գիրքերդ...
 -- Թափանցիկ թուղթով:
 x - Սրճագոյն քրաֆթի թուղթով, որ կրնաս զարդարել:
 + - Արձակուրդի նկարներով:

ԱՐԳԻՆՔՆԵՐ

Հաշուէ ընտրած +, x եւ .. նշանները:
 ● Եթէ մեծ թիւով + ունիս
 Արձակուրդը քեզի համար իտե՞լ կեանքն է: Դուն հարց կու տաս, թէ ինչո՞ւ այդքան երկար ժամանակ պէտք է ուստած մնալ գրասեղանի մը ետեւ, երբ բազմաթիւ ուրիշ բաներ կան ընելիք... ուրիշ տեղ: Քեզի համար կարելի է սորվիլ՝ պատելով, վիճաբանելով, ցամբորդելով, եւ խաղալով: Այս ձեւով դուռն շատ աւելի աշխուժ եւ արձակուրդին ընթացքին, քան՝ դպրոցը: Դասարանին մէջ դուռն կը համբոս ժամերը, օրերը եւ կ'երագես:
 ● Եթէ մեծ թիւով x ունիս
 Քեզի համար դպրոցական վերամուտը կամ արձակուրդի երթալը նոյնքան հաճոյք կը պատճառեն: Դուն կը սիրես այնպէս ընկալուիլ, փոխել կշռոյթը, զբաղումներդ, ընկերներդ: Քեզի համար այս հարցերը յստակ են. ունիս արձակուրդի ընկերներդ, դասարանի ընկերներդ, դպրոցի օրերու զբաղումներդ, արձակուրդի զբաղումներդ: Դուն շատ շուտ եւ շատ լաւ կը յարմարիս տարբեր պարագաներու: Քեզի համար դաս սորվիլը հանելի է, միեւնոյն ժամանակ գիտես նաեւ օգտուիլ բոլոր ազատ ժամերէդ: Շատ հասարակ կշռուած ձեւով գիտես կարգապահութիւն:
 ● Եթէ մեծ թիւով .. ունիս
 Քեզի համար դպրոցը շատ հաճելի վար մըն է: Հոն շատ բաներ կրնան ընել, կրնան նաեւ ժամանակը կարգապահութիւնով զբաղումներ ունենալու համար, ազատ ժամերուդ ընկերներդ տեսնելու համար... Ձանձրանալու ժամանակ չկայ, մինչ արձակուրդներուն ձանձրանալու շատ առիթներ կան: Ծիւղ է, որ արձակուրդներուն ընթացքին կարելի է հանգստանալ եւ քիչ մը միջավայր փոխել, սակայն ոչ՝ երկար ժամանակուան համար: Արթնցնալ առանց յայտագիր մը ունենալու, շուտով ձանձրալի կրնայ դառնալ:

Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնաս օգնել թղթուներուն՝ իրենց բոյնը երթալու համար: Անոնք պէտք է հետեւին 2ով բաժանալ քիւերուն:



Կրնաս գտնել իւրաքանչիւր պարուհիի շուրքը:



Կրնաս գտնել պատկերներուն շարքը՝ հասկնալու համար պատահածը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.hamazkayin.com

ԱՆՈՆՔ ԱՆ ԴՊՐՈՅ Կ'ԵՐԹԱՆ

Վերամուտ է: Աշխարհի բոլոր աշակերտները դարձեալ կը բռնեն դպրոցին նամակը: Պէտք է անպարտել ուշ չհասնելու համար: Սակայն ամէն մէկը կը հասնի իր անձնական միջոցներով՝ ինքնաշարժով, քայլով, հեծիկով... Երբեմն ալ բոլորովին տարբեր միջոցներով:

ՈՌՍԻՆՈՅ ՄԷՉ

Իր սահնակին մէջ նստած՝ 14 տարեկան Վիթթա Փիթա կը վերադառնայ



տուն, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ վրանը: Ան կը պատկանի Նէնէթ ցեղախումբին, որ կ'ապրի Սիպերիոյ հիւսիս-արեւմուտքը, Հիւսիսային բեւեռին մօտիկ: Այս թափառաշրջիկները կը տեղափոխուին հիւսիսային եղջերուներով քաշուող սահնակներով, որոնք կրնան տասնեակ քիլոմետրներ կտրել թռչունային մէջէն: Սակայն, որովհետեւ այս պայանական ապրելակերպը շատ լաւ չի յարմարիլ դպրոցական ժամանակացոյցներուն, մեծ թիւով աշակերտներ գիշերօթիկ դպրոց կը յաճախեն: Սակայն դասերուն վերջին

օրը, իրենց սահնակներուն ջուր կեցած, հայրերը իրենց զաւակներուն կը սպասեն քաղաքներու մուտքին:

ՆԻԿԵՐԻՈՅ ՄԷՉ

11 տարեկան Ռիսա թուրքէկ թափառաշրջիկ ցեղախումբի մը կը պատկանի: Ան տակաւին դպրոց չ'երթար: Ան կը սպասէ, որ իր շրջանին մէջ բացուի շրջուն նշանաւոր դպրոցներէն մէկը: Այս դպրոցները չեն տեղափոխուիր, սակայն կը համարեն 10 - 30 քմ. շրջագիծի մը մէջ ժամանակաւոր ձեւով հաստատուած բանակավայրերու մանուկները: Հակառակ ասոր, Ռիսա արդէն գիտէ, թէ ի՞նչպէս դպրոց պիտի երթայ: Որովհետեւ իր ընտանիքին վիճակը



համեմատաբար լաւ է, ան դպրոց պիտի երթայ ուղտով, որ տակաւին ամէնէն լաւ փոխադրութեան միջոցն է անապատին մէջ:

ՍՐԻ ԱՆՔԱՅԻ ՄԷՉ

Այս մեծ կղզին ծածկուած է արեւադարձային ըրոյսերով: Այս վայրի անասուններու դրախտը չի դիւրացներ քիթակալի յոր աշակերտներուն համար: Անոնք կը հետեւին գետի հոսանքին, յատուկ նաւակի մը մէջ... ոտքի կեցած:

ԵՏՈՎՊՈՅ ՄԷՉ

12 տարեկան Ապոսա կ'ապրի Եթովպոյի հարա-

ւր, Ասալա քաղաքը շրջապատող բարձունքներուն վրայ: Այս շրջանին մէջ, ուր ճամբաներ գոյութիւն չունին, ազարակապանի մը այս զաւակը նեղ արահետի մը հետեւելով դպրոց կ'երթայ: Ան, սակայն, կը կտրէ 20 քմ.՝ դպրոց երթալու եւ տուն վերադառնալու համար... վազելով, ինչպէս՝ իր ընկերներուն մեծ մասը: Սակայն ան չի վազեր միայն չուշանալու



համար: Ան կ'երագէ նշանաւոր մարզիկ եւ ազգային հերոս Հայէ Ժեպրսեյանի նման դառնալ... 10 հազար մեթրի կրկնակի ախոյեան:

ՀԱՍԱՐԱԿԱՑԱՅԻՆ ԿԻՆԵԻ ՄԷՉ

Դպրոցէն վերադարձի ճամբուն վրայ Քարուս կը հանդիպի շուկայ: Ան իր գնումներուն տուրքով կ'անցընէ ղեկին վրայ, պայուսակը կը զնչ ոտնակին վրայ եւ կ'աննէ գիւղ հասցնող գառիվայրը: Իր հակայն անիւներով «սահնակը» շատ գործնական է այդ ճամբաներուն վրայ իր փայտէ անիւներով անոնք բնու չեն ծակիր: Սակայն միակ անպատեհութիւնը այն է, որ Քարուս ըրովի կը քշէ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԽԱԶԱՏՈՒՐ ԵԱՓՈՒՃԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՈՎԱՍԱՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՐԻ ԶԷՆՏԻՐՃԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՃՈՐՃ ՊԱՐԳԵԻ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ մահուան օ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԻԼՎԱ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳՈՂԱՐԻԿ ԳԱՍԱՊԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԵՐԺԻՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԻՏՅԻՆԵԱՆԻ մահուան Գ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Ս. Զատասնից Մանկանանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԷՆ ԱՆԱԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտոն պիտի կատարուի Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003, Որմէլիի Ս. Յարութին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5557

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵՍ

- 1. Քաղցրածայն թըռչուն - Այլուբենէն:
- 2. Նշանակութիւն - Ժամանակ:
- 3. Հիմնովին ոչնչացուած:
- 4. Արգելական - Շարունակ:
- 5. Հարաւային Ամերիկայի ոստաններէն - Ցետոյ:
- 6. Իրերայաջորդ տան - Պօսթի մասերէն:
- 7. Սկստակի, երկմիտ:
- 8. Հրէշի բոյսը - Մանգաղի կոթ:
- 9. Աչքի ծիածան - Սուտանի լիճերէն:
- 10. Բուսական սննդանիւթ - Հայաստանի հնավայրերէն:

ԹԻԻ 5556

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Չ	Ա	Ն	Գ	Ա	Մ	Ա	Ն	Ք
2	Պ	Տ	Ե	Ր	Ի	Մ	Ա	Ս	
3	Ա	Ր	Կ	Ո	Տ	Ն	Մ	Ա	Ն
4	Տ	Տ	Հ	Ա	Ս	Ա	Ն	Ա	
5	Ա	Ս	Ա	Կ	Ա	Ս	Կ	Ն	
6	Կ	Ա	Ր	Կ	Ա	Հ	Ա	Կ	Ա
7	Հ	Ա	Ն	Մ	Ա	Ս	Ն		
8	Ք	Ա	Կ	Ք	Ա	Ի	Ե	Լ	Ի
9	Ի	Ր	Ա	Ն	Ն	Ք	Ի	Մ	
10	Ժ	Ա	Պ	Ա	Ի	Ե	Ն	Ս	



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին եղել.

Սուրիական թղթակի	28,80 - 29,00	լ.ն.
Քուէյթեան տիւար	5110,00 - 5135,00	լ.ն.
Յորդանանեան տիւար	2121,00 - 2131,00	լ.ն.
Պահրէյնեան տիւար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տիրիւմ	410,75 - 412,75	լ.ն.
Քաթարեան ռիւալ	413,75 - 415,75	լ.ն.
Սէուտական ռիւալ	402,00 - 404,00	լ.ն.
Օմանեան ռիւալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կիւնէ	220,00 - 230,00	լ.ն.
Անգլիական սթըրլին	2515,00 - 2525,00	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1142,00 - 1147,00	լ.ն.
Թրքական լիրա	107,50 - 108,00	լ.ն.
Կիպրական փաունտ	2990,00 - 3015,00	լ.ն.
Ճապոնական հապար եէն	13,50 - 13,60	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1122,00 - 1127,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	1029,00 - 1034,00	լ.ն.
Եւրօ	1764,00 - 1774,00	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	148,500 - 153,500	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	134,000 - 139,000	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	124,000 - 129,000	լ.ն.
Մեքսիքական փէսոս	711,000 - 731,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	18,550,000 - 18,750,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	385,00 - 385,50	Տ
Մէկ օսն արծաթ	5,08 - 5,10	Տ

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1700 - 1.1705
Քանադական տոլար	1.3405 - 1.3410
Չուիցերիական ֆրանք	1.3187 - 1.3192
Ճապոնական եէն	110.50 - 110.55
Մէկ սթըրլին	1.6694 - 1.6698

Մէկ տոլար 580 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՆԻ Ա. 62դրամ ԳԻՆԻ Բ. 62դրամ

Ա. կարգ	4,01	4,19
Բ. կարգ	-	-

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Սքանչելի շաբաթվերջ մը ձեզ կը սպասէ՝ քարեկամութեան եւ սիրոյ մթնոլորտին մէջ. դեռ ի նչ կը սպասէք: Փառք տուէք Աստուծոյ, գոհացէք ձեր ունեցածով:

ՅՈՒՆ (21 Ապրիլին 21 Մայիս)
Այս շաբաթվերջը պիտի տրամադրէք հանգստանալու եւ կեդրոնացնալու ձեր ասպարէզին աշխատանքները դասաւորելու գործին վրայ, որովհետեւ քիչ մը յետաձգուած գործեր ունիք:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Օրը շատ յարմար է եւ իտեալ՝ կեանքի կոչելու մամբորդութեան մը համար ձեր ծրագիրը, որ պիտի իրագործուի քանի մը ամիս ետք: Ձեր գործերը յաշտողութեամբ պիտի պակուի՞ն՝ նոյն ատեն կատարելով տարբեր մարզի ընտրանքներ:

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)
Լաւ հետեւեալներ կան ձեր տնտեսական վիճակը բարելաւելու. ձեզի պիտի ներկայացնեն լաւ առաջարկներ: Այսօր բախտը ձեզ պիտի ուրախացնէ:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)
Դուք ձեզ մրցումի մը մէջ մի՞ նետէք, որովհետեւ վստահ չէք ձեր յաղթանակին: Այսօր լուրջ գործերով մի՞ զբաղիք, մնացէք առօրեային մէջ, սովորական ձեւով:

ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Լաւ վիճակի մէջ էք. օրը պիտի անցնի զուարթ մթնոլորտի մէջ: Ոչինչ պիտի խանգարէ ձեր ծրագրած աշխատանքները, պիտի մնաք բարեկամական մթնոլորտի մէջ:

ԿՇԻՌ-Ք (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Ձեր գաւակները տարեք հոն, ուր անոնք կը փափաքին: Դուք եւս պիտի զուարթանաք անոնց հետ: Օրը պիտի անցնի առանց մտահոգութեան: Բախտաբեր է օրը:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Ձեզմէ հետեւեալ սիրելի բարեկամներու բացակայութիւնը կարծուի զգացում պիտի ստեղծէ ձեր ներաշխարհին մէջ: Երկար տարիներ չէք կրցած անոնց հետ շփման մէջ մտնել, կապ պահել: Բայց կարիք կա՞յ այդքան մտահոգուելու:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Քաջութիւնը ունեցէք երթալ-այցելելու հեռաւոր քաղաք մը գտնուող ձեր բարեկամներուն: Պէտք չէ որ պաղտեցէք ձեր յարաբերութիւնը հեռաւորութեան պատճառով: Լաւ բարեկամները միշտ պէտք է փնտռուիք:

ԱՅԾԵՂՃԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Ձեր տնտեսական վիճակը, որ բաւական տկարացած էր, սկսած է դառնալ արդիւնաւոր եւ պտղաբեր: Բայց ունիք այնպիսի զգացում մը, որ զրկուած էք ամէն բանէ:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)
Սքանչելի յաջողութիւն մը պիտի ունենաք ընծայելով ճիշդ այն նուէրը, զոր կ'երթաք որոնելու ստացողը: Ի՞նչ պիտի հասկցած էիք այս գաղտնիքը... Օրը պիտի անցնի գոհունակութեամբ:

ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Օրը պիտի անցնէք անհոգ, պիտի զուարթանաք պտոյտի մը երթալով կամ ձեր սիրած այլ կարգի զբաղումներով: Բարեկամներ պիտի այցելեն ձեզի եւ անոնց հետ պիտի ունենաք արդիւնաւետ գրոյցներ:

ՕՐԱՏԵՏՈՒ

ՓՈՒՍՏՈՆ / ՅՈՒՅՆԱՀԱՆԿԵՄ / ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ԳԱՇՆԱԿԻ ԵՒ ՋՈՒԹԱԿԻ ԵԼՈՅԹ՝ «ԷՍԵՄՊԼԻ ՀՈԼ»Ի ՄԵՉ

Դասական երաժշտութեան երեկոյ մը այսօր կը մատուցուի Պէյրուի Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ» սրահին մէջ, ուր էլոյթ կ'ունենան դաշնակահար եւ յօրինող Ժիւլիա Սֆէյր - Էլ Խուրի եւ ջութակահար Միշէլ Խէյրալլա: Ելոյթը կը կրէ «Էսթատոս Տէլ Ալմա» խորագիրը:



Լիբանանցի, սալայն Քոլոմպիա ծնած եւ մեծցած երաժիշտ Ժիւլիա Սֆէյր - Էլ Խուրիի այսօրուան նուագահանդէսը առաջինն է, զոր արուեստագէտը կ'ունենայ իր հայրենիքին մէջ: Փոքր հասակէն արուեստի միջավայրի մէջ մեծցած արուեստագէտը գեղարուեստի մէջ իր առաջին քայլերը նետած է սպանական պարի մէջ եւ միայն հետագային իր ամբողջ ժամանակը յատկացուցած է դասական երաժշտութեան: Ան երաժշտական գործեր յօրինելու սկսած է դեռ տղայի տարիքին: Իր ամբողջ յարուստը նուազապէս յատկացուցած է իր երաժշտական ուսումը ստանալի ետք, յայն շարունակած է Փարիզի երաժշտական Հիմնարկին մէջ՝ ապա Մոսկուայի «Չայքովսքի» երաժշտանոցին մէջ: Ան անդամ է ֆրանսական նուագախումբերու, ինչպէս նաեւ իր հիմնադրութեան առաջին օրէն մաս կը կրցնէ Լիբանանի Պետական սինֆոնիք նուագախումբին:

Ելոյթը, որ «Էսթատոս Տէլ Ալմա» էլոյթին եկամուտը պիտի յատկացուի ֆարեսիական «Ալթիլալ» կազմակերպութեան: Յայտագիրը կը բաղկանայ Ժիւլիա Սֆէյր - Էլ Խուրիի յօրինումներէն:

ԱՅՍՕՐ

- Հայրենի «Բարեկամութիւն» պարային անսամպլի գոյգ ելոյթներ: Աշակերտական էլոյթ, ժամը 11:30ին, Երեկոյեան էլոյթ, ժամը 20:30ին, ԵՌԻՆՍՍՔՕ:

- Նուագահանդէս «Էսթատոս տէլ Ալմա», դաշնակահար Ժիւլիա Սֆէյր Էլ Խուրիի եւ ջութակահար Միշէլ Խէյրալլայի էլոյթ, ժամը 20:30ին, Պէյրուի Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ» սրահ:

- Միշէլ Արեւելիի շաբաթավերջի փառատոն, «Սոֆիլ» սրահ, մինչեւ 8 Հոկտեմբեր:

- Նկարչական ցուցահանդէս «Պիլոնկիկկ», Մոնա Ապի Հաննայի գործերը, «Տար էլ Մոնա» ցուցասրահ, մինչեւ 11 Հոկտեմբեր:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆէյզըզ», Ֆլաւիա Քոստիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 18 Հոկտեմբեր:

- Ջետեղման արուեստի ցուցահանդէս՝ Միքէլ Նաւարոյի գործերը, «Սերվանթես» հիմնարկ, մինչեւ 6 Հոկտեմբեր:

ՕՂԵՆՈՅՑ



ՇԱԲԱԹ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 28°C

ԳԻՇԵՐ՝ 20°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 67%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԵՐԻ ԿՈՒՄՍՈՒՄ

4 Հոկտեմբեր 1953

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԱՀԱՒՈՐ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ



Մտահոգիչ լուրեր կը հասնին Ուշիկկընէն: Խորհրդային Միութեան ջրածնային ռումբ ունենալը պատճառ դարձած է, որ Միացեալ Նահանգներու ապահովութեան ազգային խորհուրդը վերատեսութեան ենթարկէ միջազգային կայութիւնը եւ վերաքննէ Խորհրդային Միութեան հետ բանակցութեան սկսելու կարելիութիւնները:

Անցեալ շաբաթ շատ կարեւոր ժողով մը տեղի ունեցած է Փենթագոնի մէջ՝ մասնակցութեամբ ամերիկեան սպայակոյտի պետերուն, որոնք նոր տուեալներու հիման վրայ ռազմագիտական նոր խնդիրներու մշակման ձեռնարկած են:

Ի՞նչ կը ճշմարտեմ այս բոլորը: Արեւմուտքի քաղաքականութիւնը ցարդ ներշնչուած էր հիւլեակական գեներու մարզին մէջ անոր ունեցած գերակայութեան տեսակէ մը մեկնաշնորհին վրայ: Հիմա, ըստ պաշտօնական բերաններու, հաստատուած է Խորհրդային Միութեան ջրածնային ռումբ ունենալը: Հետեւաբար, Արեւմուտքը այլեւս չի կրնար վստահիլ իր հիւլեակական գեներուն:

(ՀԱՏՈՒԱԾ)

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



ՀԱՐԱԻՆ ԿԵՏՈՎ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից 2003-2004 եղանակի առաջին մրցումին, այսօր, երեկոյան ժամը 8:30ին, Սայտայի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ. կը ճակատի երբեմնի իր գլխավոր մրցակիցին՝ Նրժմէի դէմ: Առաջին խաղի մրցումին, Հ.Մ.Ը.Մ. «դատապարտուած է» ոգի ի բռին պայքարելու, որովհետեւ մրցակիցը դիրքին պատահ չէ, ընդհակառակը, բոլոր ժամանակներու, ինչպէս նաեւ վերջին տարիներու երկրին զօրաւոր կազմերէն մէկն է: Բնականաբար Նրժմէի համակիրներուն, պատասխանատուներուն եւ մարզիկներուն մօտ ալ հակառակը նոյնն է, այսինքն՝ անոնք պիտի ըսեն նոյն բաները, զորս մենք կ'ըսենք Նրժմէի մասին: Հետեւաբար պայքարը պիտի ըլլայ շատ աւելի սուր, որովհետեւ այսօրուան մեր մրցակիցը եւս պիտի պայքարի ամէն գնով Հ.Մ.Ը.Մ.էն կէտ խլելու համար:

Ճիշդ է, որ կարելի չէ առաջին օրէն հսկայական պահանջներով մօտենալ մեր նորակազմ խումբին, այսուհանդերձ արդար ակնկալութիւն է միշտ ալ յաղթական վերադարձը: Ասիկա համակիրին նուազագոյն իրաւունքն է: Մեր համակիրները գիտեն եւ տուած են փաստը բազմիցս, որ երբ մեր խումբը լաւ խաղարկութիւն ցուցաբերէ՝ ոգի ի բռին կը քաջալերուի, նոյնիսկ եթէ պարտուած է: Ասոր լաւագոյն օրինակը տուինք Նրժմէի դէմ վերջին մրցումին, բաժակի մրցաշարին:

Այսօր տարբեր չէ երեկէն: Մենք հարաւ թէ հիւսիս, Պեքաա թէ այլուր միշտ պիտի գտնուինք մեր խումբին կողքին եւ ոգի ի բռին պիտի քաջալերենք պայն, յաղթէ թէ պարտուի, կարեւորը լաւ եւ գոհացուցիչ խաղարկութիւնն է:

Եթէ տրամաբանութիւն կայ ֆուտբոլի մէջ, ապա այսօր այդ տրամաբանութիւնը կը թելադրէ երկու կողմերուն՝ մէկական կէտով բաւարարուիլ եւ գոհունակութեամբ վերադառնալ Պէյրութ: Բայց որովհետեւ ֆուտբոլի համակիրը միշտ ալ աւելիին կը ձգտի (ևս չարօրէն), ապա պիտի ուզենք անշուշտ երեք կէտով վերադառնալ եւ առաջին խաղ օրէն «մեր հաշիւը ընել տալ» մեր բոլոր մրցակիցներուն: Մեր ոտքերը գետինն են եւ չենք երապեր: Կը վստահինք մեր խումբին կարողութեան, մարզիչին եւ պատասխանատուներուն դատողութեան: Եւ ճիշդ այդ պատճառով ալ կը հաւատանք, համոզուած ենք, որ մեր խումբը կրնայ երեք կէտով վերադառնալ Պէյրութ, նոյնիսկ եթէ Նրժմէ զօրաւոր է: Պարզապէս որովհետեւ մենք նուազ զօրաւոր չենք, լաւ տարբեր ունինք, անհրաժեշտ բոլոր տուեալները ունինք յաղթելու:

Կը մնայ, որ այսօր երեկոյան խուռներամ բայց կարգապահ շարքերով «խուժենք» հարաւ, ամբողջ 90 վայրկեան ոգի ի բռին քաջալերենք մեր խումբը, Սայտային ճակատաբաց եւ հպարտօրէն վերադառնալու վառ յոյսերով:

ՄԱՐԶԱՍԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ՖԵԴԵՐԱՏԻՆ 2003-2004 ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՍՕՐ

ՆՐԺՄԵ - Հ.Մ.Ը.Մ. ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 8:30ԻՆ ՍԱՅՏԱՅԻ ՄԵՋ

Ստժէս - Թատամոն Սուր բացման մրցումով այսօր կը սկսի Լիբանանի ֆուտբոլի Ա. դասակարգի ախտաբանութեան 2003-2004 եղանակը:

Այսօրուան երկրորդ մրցումը տեղի պիտի ունենայ երեկոյան ժամը 8:30ին, Սայտայի ֆուտբոլային դաշտին վրայ, Նրժմէի եւ Հ.Մ.Ը.Մ.ի միջեւ:

Մտայեալ բոլոր ճակատումներն ալ տեղի պիտի ունենան վաղը, բոլորն ալ ժամը 4:00ին:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին 2003-2004 եղանակի ամբողջական կազմը:

ԲԵՐԴԱՊԱՂԱՆԵՐ - Սա-

զօ Էսքիբեան, Ժաբր Պաքը-եան եւ Յարութ Սարգիս: ՅԵՏԱՊԱՂԱՆԵՐ - Կարէն Բարսեղեան, Վարդան Գոչոյեան, Վարդան Պոյաճեան, Յարութ Կիւլիւզեան, Լեւոն Խաչատուրեան, Յարութ Մարգեան, Օմար Հալապի եւ Թոնի Պու Ֆրանսիս:

Միջնադասում - Անթոնիո Սոթո, Ահմէտ Թատորեւ: Ա. հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Մաս	Ժամ	ԴԱՇՏ
Սաժէս - Թատամոն Սուր	4:00	Պուրն Համուտ
Նրժմէ - Հ.Մ.Ը.Մ.	8:30	Սայտա
ՎԱՂԸ		
Սաֆա - Ծապապ Սահել	4:00	Սաֆա
Հ.Մ.Ը.Մ. - Օլիմպիկ	4:00	Պուրն Համուտ
Սայամ - Ահմ	4:00	Թրիփոլի
Մապարթա - Ահմար	4:00	Սայտա

ՏԷԼ ՓԻԵՆՈ ՉՈՐՄ ՏԱՐԻՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ենթադրուած պատասխանատուները յայտնեցին, որ իրենց ակումբին մաս կազմանաւոր Տէլ Փիեո, այլ կազմի մը պիտի չփոխանցուի, որովհետեւ ան չորս տարիով երկարաձգեց իր պայմանագրութիւնը:

Այն տարածայնութիւնը կար, որ յառաջիկայ տարի, երբ արտաքին անոր ստորագրած պայմանագրութիւնը, ան շատ հաւանաբար այլ կազմի մը փոխանցուի, սակայն ան իր պայմանագրութիւնը երկարաձգելով այժմ վերջնականապէս փաստեց, որ այլ խումբի մը փոխանցուելու նպատակ չունի:

Իտալացի միջազգային յառաջապահ Տէլ Փիեո, այսպիսով տարեկան իր ակում-

բէն պիտի գանձէ 9 միլիոն ամերիկեան տոլար, որուն 2,5 միլիոն տոլարը սակայն ան պիտի ստանալ ծանուցումներէն:

30 տարեկան յառաջապահ, որ 21 Սեպտեմբերին Ա. Էս. Ռոմայի դէմ տեղի ունեցած մրցումին (2-2) վիրաւորուեցաւ, մինչեւ Հոկտեմբերի վերջը պիտի բացակայի դաշտերէն:

1993ին Փատովայն տի (30 տարեկան) Ենթադրուած միացած հրաժարեցաւ իր պաշ-



Տէլ Փիեո



Սաստի Զապաֆի

Տէլ Փիեո գարդ իր ակումբին Ենթադրուած պատասխանատուներէն հետ շահած է Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերացիոյ կողմէն (հինգ անգամ), «Չէմփիլըն» կ'ըսէ բաժակը (մէկ անգամ), Միջնադասումի մրցաշարը (մէկ անգամ), Եւրոպայի գերբաժակի մրցաշարը (մէկ անգամ), Իտալիոյ բաժակը (մէկ անգամ) եւ Իտալիոյ գերբաժակը (չորս անգամ):

Ենթադրուած պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ ակումբին բաժնետէր եւ Լիպիոյ նախագահ Մուամմար Քալաֆիի պաւակը՝ Սաս-

տուն, որովհետեւ չ'ուզէր ակումբին ներս րելէ պաշտօն մը ստանձնել, թէ ան անցեալ տարի Հոկտեմբերին ի վեր թորինոյլ այդ ակումբին 7,5 առ հարիւրի բաժնետէրն է:

Ենթադրուած լքելով, ան այսպիսով վերջապէս պիտի յաճողի Քալաֆիի մրցումներուն իր մասնակցութիւնը բերել, երբ կրէ իր նոր ակումբին՝ Փերուսիայի շապիկը (ամբարն ընթացքին): Նշենք, թէ իպիացի միջազգային միջնադաս Սաստի միեւնոյն ժամանակ ալ Լիպիոյ ֆուտբոլի ֆետերասիոնին փոխ նախագահն է:

«ՊԱՐՏԲԸ»...

Անցեալ եղանակին, երբ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը Բ. դասակարգի ֆուտբոլի ֆեդերացիոյ կողմէն մասնակցեց, խումբի պատասխանատուներուն հետ «Վանայ Զայն»-էն ունեցած մեր հարցապարզին ընթացքին անոնք ի միջի այլոց նաեւ մատնանշեցին նիւթական դժուարութիւններ եւ կոչ ուղղեցին ունկնդիրներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն, որ իւրաքանչիւր իր կարողութեան ներս շափով օժանդակէ խումբին:

Բնականաբար, ինչպէս որ կ'ակնկալուէր՝ արձագանգը դրական եղաւ յետոյ:

Այստեղ, սակայն, կ'արժէ ընդգծել պարագայ մը, որ անպայման կրնայ վարակիչ օրինակ դառնալ:

Հալի հարցապարզը արտառած, մեկի ծանօթ համետ պայմաններու մէջ ապրող տարեց մայրիկ մը հեռաձայնեց եւ իր ու տեսողութիւնը գրեթէ կորսնցուցած քրոջը կողմէ խոստացաւ ամէն ամիս գումար մը նուիրել ֆուտբոլի խումբին:

Յուշիչ բան մը կար այդ երեւոյթին մէջ: Անկախ նիւթականէն, այդ քրոջը, որոնք ի վիճակի չեն դաշտ երթալու եւ նոյնիսկ ֆուտբոլի մասին տարրական գիտելիքներ ալ չունին, Հ.Մ.Ը.Մ.ին կը խոստանան ամէն ամիս նուիրել իրենց լուման:

Աւելի ն... Քանի մը օր առաջ դարձեալ հեռաձայնեց մայրիկը եւ ըսաւ. - Երեք ամիսէ ի վեր գիւղն էինք. քրոջս եւ ես մեր պարտքը պիտի վճարենք Հ.Մ.Ը.Մ.ին: Պա՞րտքը: - Բայց դուք պարտք չունիք, ըսի: - Չէ՛, տղաս, մենք խոստացած ենք եւ մինչեւ մեռնինք ատիկա հաճելի պարտք մըն է: Այսպիսի խնկելի համակիրներու դիմաց, մեր խումբին ճիշդ պարտք է արժանաւայել կերպով սկսիլ այսօրուան պայքարին:

ԹՈՐԳՈՍ

2003ի ԱՂԶԱՆՑ ՍՈՆՏԱԼ

ԳԵՐՍԱՆԻԱ - ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ՇՈՒԷՏ - ԶԱՆԱՍԱ ԿԻՍԱԽԱՐՏԱԿԱՆԻ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ

Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցող 2003ի աղջկանց Մոնթիալի քառօրյա աւարտականի մրցումներուն, Միացեալ Նահանգներ, Շուէտ, Քանադա եւ Գերմանիա յաղթանակներ արձանագրելով, ապահովեցին կիսաւարտական հանգրուանին իրենց տեղերը:

Կիսաւարտականին, Միացեալ Նահանգներ իրենց դէմ պիտի ունենան Գերմանիան, մինչ Շուէտ պիտի ճակատի քանադայի դէմ:

Ստորեւ՝ քառօրյա աւարտականի մրցումներուն արդիւնքները:

Միացեալ Նահանգներ - Նորվեկիա	1-0
Շուէտ - Պարագի	2-1
Քանադա - Չինաստան	1-0
Գերմանիա - Ռուսիա	7-1

ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՍԱԻ ԿԻՍԱԽԱՐՏԱԿԱՆԻՆ

Մոսկուայի մէջ (Ռուսիա) տեղի ունեցող իտալիական «Քրեմլինի Բաժակ»ի մրցաշարին, քառօրյա աւարտականին իր կատարած մրցումին, հայրենի մարզիկ՝ Սարգի Սարգսեան ալ իրազօրծում մը եւս կատարեց, երբ այս անգամ մրցաշարէն դուրս ձգեց մրցաշարին շրջապատէն մարզիկը՝ արժանաւորեց Սարգսեանի ֆուտբոլի մրցաշարին 6-3 եւ 6-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով, ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տեղը:

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԵՐԱՍՈՒՏ

Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս մագաճիկի Սկաուտ Խորհուրդն ու խմբագրութիւնը այսու կը տեղեկացնեն, թէ սկաուտական անդրաբնութիւնը կը վերսկսի Կիրակի օրը «Անթիլիաս»-էն Հ. Մ. Ը. Մ. համալիրէն մերսը: Առ այդ, բոլոր տարագրութեան պարտին մերկայ ըլլալ Կիրակի, 5 Փետրեմբեր 2003ին եւ ամէն Կիրակի, առաւօտեան ժամը 9:00ին: ԵԱՆՕԹ. Կընդունելու Ենթադրուած, ինչպէս նաեւ կը տեղեկացնեն մեր սիրելի ծնողներուն, որ ունինք օթորաթի դրութիւն հեռաւոր շրջաններու համար:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ԳՈՐԾԱԿՅԱՐԱՐ ՄԵՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ԴԻՄԱԾ Ե

ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԻ ԴԷՄ

ՆԱԽԱԶԳՈՒՅԱԿԱՆ ԱՐՃԱԻ ՄԸ
ՀՈԿՏԵՍԲԵՐ - ՆՈՅՏԵՐԵՐ ԱՍԻՍԵՐՈՒՆ ԸՆԹԱՅԵԻՆ

ԱՅՍ ԱՌԻԹՈՎ
ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾԵՐՆ ԿՐԱՅ
ԸՆՏՐՈՒԾ ԵՆ ՈՐՈՇ ԸՒԻԱՆԴԱՆՈՅՆԵՐ ԵՒ ՄԻԱՅՆ

ՍԷՆ ՍԱՐՔԸ

ԻՐԵՒ ԱՆՏԱՃԱՆԱԶՄԱՆ ԿԵՂՈՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՄԱՐ ԿՈՒՐՇԵՐՈՒ
MAMMOGRAPHY - ECHOGRAPHY ՆԿԱՐԸ

ՍԱԿԸ ՈՐՈՇՈՒԾ Ե 40,000 Լ. Ո. ՄԻԱՅՆ՝ ՓՈԽԱՆ 90,000Ի՝
ՕԳՏՈՒԵԼՈՒ ԸՄԱՐ ԱՅՍ ԱՌԻԹԵՆ ԱՆՍԻԶԱՊԵՍ
ԴԻՄԵԼ ՈՒՂԱԿԻ ՍԷՆ ՍԱՐՔԻ
ԺԵԸԱՌՈՒԻ ԵՒ ԶԱԼԸԱՅԻ ԿԵՂՈՆՆԵՐԸ
ՀԵՌ. ԺԵԸԱՌՈՒԻ - 01-566633, 01-576565, 03-21 7297
ԶԱԼԸԱ - 01-885829, 01-891464, 03-503603

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԾԱԲԱԹԱԿԵՐՋԸ

Շաբաթավերջին տեղի ունենալիք Գերմանիոյ (Պաշտպանական), Ֆրանսիոյ (Քաղաքացիական), Անգլիոյ եւ Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն, տեղի պիտի ունենան հետաքրքրական ճակատումներ:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան ծրագրուած մրցումներուն, հետաքրքրական պիտի ըլլայ Պաշտպանական - Հերթա Պերլին ճակատումը: Հիւրկազմը իր ամէն կարելին պիտի ընէ յաղթական վերադառնալու համար Պաշտպանականին դաշտէն, նկատի ունենալով, որ Հերթա այդ դաշտին վրայ իր վերջին յաղթանակը արձանագրած է... 26 տարի առաջ:

● **ՖՐԱՆՍԱՅԻ** ֆուտբոլի ախոյեանութեան ծրագրուած մրցումներուն, թէեւ այդքան ալ զօրաւոր ճակատումներ չկան, սակայն պայքարը պիտի ըլլայ բաւական սուր: Մոնպելիէի եւ Մարսէլի միջեւ, որոնք յաջողութեամբ պիտի ճակատին կէնկանի եւ Պաշտպանականին դէմ: Մոնպելիէ, այժմ մէկ կէտի առաւելութիւն մը ունի երկրորդ դիրքը գրաւող Մարսէլի վրայ:

● **ԱՆԳԼԻՈՅ** ֆուտբոլի ախոյեանութեան ծրագրուած մրցումներուն, գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ «Էնֆիլտը» մէջ, ուր Լիվըրպոլ պիտի հիւրընկալէ պարագլուխի դիրքը գրաւող Արսենալը:

● **ՍՊԱՆԻՈՅ** ֆուտբոլի ախոյեանութեան ծրագրուած մրցումներուն, ամէնէն աւելի հետաքրքրական եւ ուշագրաւ ճակատումը պիտի ըլլայ Միլանոյի տերպին՝ Ինթերի եւ Ա. Սէ. Միլանի միջեւ:

● **ՍՊԱՆԻՈՅ** ֆուտբոլի ախոյեանութեան ծրագրուած մրցումներուն ամէնէն տաք ճակատումը տեղի պիտի ունենայ «Նուքամպի» մէջ, ուր Պարսելոնա պիտի հիւրընկալէ Վալենսիան:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէլլուրի ժամով):

ԳՊՈՒՏԵՍՈՒԿԱ	ԺԱՄ
ԱՅՍՈՐ	
Հանովըր 96 - Շալքե	16:30
Այնթրախթ Ֆրանքֆորթ - Պորուսիա Տորթուլին	16:30
Ֆրայպուրկ - 1860 Միլնիխ	16:30
Շթուրպարթ - Քեօլն	16:30
Պայերն Միլնիխ - Հերթա Պերլին	16:30
Համպուրկ - Պորուսիա Մեոնշտրոմկապալ	16:30
Պոխում - Քայզերսլաուսթրըմ	16:30
ՎԱՂԸ	
Պայեր Լեւերքուզըն - Հանգա Ռոսթոք	16:30
Վերտըր Պրեմըն - Վոլֆսպուրկ	16:30

● **ՖՐԱՆՍԱՅ**
ԱՅՍՈՐ

Նանթ - Ռեյմս	18:15
Թուլուզ - Մոնպելիէ	21:00
Օքսէռ - Լիլ	21:00
Նիս - Սթրասպուրկ	21:00
Կեմկա - Մոնպար	21:00
Լանս - Մէս	21:00
Լը Մանս - Պորտո	21:00
Ամպուի - Լիոն	21:00
Սոչո - Փարիզ Սէն Ժերմէն	21:00
ՎԱՂԸ	
Մարսէլ - Պարիզ	21:45

● **ԶԱՂՉԻՈ**
ՎԱՂԸ

Անքոնա - Ուտինեզե	16:00
Էմպոլի - Մոտենա	16:00
Ինթեր Միլան - Ա. Սէ. Միլան	16:00
Եւրոպէս - Պոլոնիա	16:00
Լացիո Ռոմա - Քիեւո	16:00
Լեչէ - Պրեշիա	16:00
Փարմա - Սամպորիա	16:00
Սիենա - Ա. Էս. Ռոմա	16:00
Փերուցիա - Ռեցինա	19:00

● **ԱՆԳԼԻԱ**
ԱՅՍՈՐ

Լիվըրպոլ - Արսենալ	14:30
Մանչեսթըր Եւնայթըդ - Պրեմիեր Քլէպ	17:00
Տոլինէմ - Լայպըր Սիթի	17:00
Լիօ - Պլեյքըրըմ	17:00
Նիւքասլ - Սաութհեմփթըն	17:00
Փորթսմութ - Չարլթըմ	17:00
Թոթեհեմ - Էվըրթըմ	17:00
Վուլվը - Մանչեսթըր Սիթի	17:00
ՎԱՂԸ	
Միտլըդպորթ - Չելսի	16:00
Ասթոն Վիլա - Պոլըն	18:05

● **ՍՊԱՆԻԱ**
ԱՅՍՈՐ

Տեֆորթիս Բորուս - Աթլետիկո Մատրիտ	20:30
Վիարեալ - Ռեալ Մարալոնա	20:30
Ռեալ Պեթիս - Աթլետիկո Պիլայո	22:30
ՎԱՂԸ	
Մալախ - Սելթա Վիկո	18:00
Մուրսիա - Ալպասթի	18:00
Մալորքա - Օսասունա	18:00
Ռեալ Սոսիեթատ - Սելիլա	18:00
Ռեալ Վալադոլիտ - Ռասիլնկ Սանթամարի	18:00
Ռեալ Մատրիտ - Էսփանիոլ	20:00
Պարսելոնա - Վալենսիա	22:30

ԻՐԱՔԻ ԳԾՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԲԱՆԱԶԵԻՆ ՆԱԽԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն

ՀԱՄԱԶԱԿԱՆ ԲԱՆԱՊԻՄԻ ԶԵՆՔԵՐ ԶԵՆ ԳՏՈՒՄԾ ՏԱԿԱԻՆ

Միւս կողմէ, Իրաքի մէջ հաւաքական քանդումի վէտեր փնտռող 1200 մասնագէտներու ամերիկեան խմբակին պատասխանատու Տէյվիտ Քէյ յայտնած է, թէ նման որեւէ վէտ չէ գտնուած:

Մասնագէտները չեն կրցած հաստատել նաեւ զադունի սպասարկութիւններու նախապատերապմեան այն տեղեկութիւնները, թէ Իրաքեան միաւորներ կը պատրաստուին քիմիական վէտեր գործածել ամերիկեան ուժերուն դէմ:

Քոնկրէսին գաղտնի սպասարկութիւններու յանձնարարութեան շրջանակէն քիմիական վէտերու մասին իրաքեան միաւորներու արտադրել ամերիկեան օդային հարուածներու եւ տարիներու պատժամիջոցներուն պատճառած վնասին հետեւանքով:

մար Իրաքեան վէտերու ծրագիրին մասին: Նախագահ Ճորձ Պուշի համաձայն, Քէյի տեղեկագիրը «կը փաստէ, որ Սատտամ Հիւսէյն վտանգ կը ներկայացնէր աշխարհի»:

ՄԱԿի վէտեր քննիչներու նախկին պատասխանատու Հանս Պիլքս յայտնած է, թէ ամէնէն կարեւոր կէտը այն է, թէ խմբակը հաստատած է, որ հաւաքական քանդումի վէտերու որեւէ պահեստ չէ գտնուած:

Ան աւելցուցած է, որ ամերիկեան գլխաւորութեամբ դաշնակից ուժերը չեն յաջողած փաստել, թէ Իրաք «յստակ է անմիջապէս» սպառնալիք մը կը ներկայացնէ: Ասիկա պիտուրական գործողութեան մը համար ՄԱԿի չափանիշներէն մէկն է:

Բրիտանիոյ արտա-

քին գործոց նախարար Ճէք Սթրո մինչ այդ յայտնած է, թէ վէտեր չգտնելը «չի նշանակեր, թէ անոնք ինչ չեն»:

Իրաքի մէջ ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները, որոնք Մայիս 1էն ի վեր ամերիկացի 88 զինուոր սպաննած են, սաստկացած են:

Իրաքի մէջ ամերիկեան գլխաւորութեամբ ուժերու իրաւանաւար պօրավար Ռիքարտո Սանչէզ յայտնած է, «Թշնամին եղափոխուած է. ան քիչ մը աւելի մահացու, քիչ մը աւելի բարդ, քիչ մը աւելի արդիական եւ կարգ մը պարագաներու աւելի վճարական դարձած է»:

Ան ըսած է, որ իր պիտուրներէն միջին հաշուով շարքաւ 3էն 6 հոգի կը մահանայ եւ 40 ուրիշներ կը վիրաւորուին:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● **ՄՈՍԿՈՒԱ** - Ռուսական քարիւղի «Եուրոս» հսկայ ընկերութիւնը երէկ յայտնած է, որ աւելի փոքր իր մրցակիցին՝ «Սիպնէֆթ»-ի հետ իր միաձուլումը՝ ստեղծելու համար քարիւղ արտադրող աշխարհի չորրորդ մեծագոյն սեփական ընկերութիւնը, աւարտած է:

● **ԻՍԼԱՄԱՊԱՏ** - Փաքիստան երէկ առաւօտուն փորձարկած է մօտիկ հատուցութեամբ հրթիռ մը, որ կրնայ կորիզային գլուխ մը կրել: Անիկա ըսած է, թէ յառաջիկայ օրերուն այլ փորձարկումներու պիտի ձեռնարկէ:

● **ՊՈԼԻՍ** - Իսրայէլի ենթակառուցներու նախարար Ճոզէֆ Փարիցի երէկ ըսած է, թէ իր երկիրը մօտ առեւնէն պիտի վերջնականացնէ համաձայնութիւն մը՝ Թուրքիայէն ջուր գնելու համար, սակայն ան նշած է, որ կան տակաւին կասկածներ ջուրին իսրայէլ փոխադրութեան միջոցներուն շուրջ:



ԱԶՏԱՐՈՊԵԱՆ

Արուեստից Վարժարան







Ձեր Ամենա Աօտիկ թեֆնիքը գուլէճը

Bourj Hamoud, Arax street, Tel.: 01/260504, Fax: 01/262955

B.T. 100,000 LP/month * LCCIEB Business Specializations * ACCOUNTING 50,000 LP/month * TICKETING IATA
English & Foreign Languages * PROFESSIONAL IT TRAINING * COMPUTER + INTERNET 25,000 LP/month
COMPUTER Hardware * TV - Video & Radio Repair * Car Electricity & Electronics * HAIR STYLING * MAKE UP
JEWELRY Design * DIAMOND Setting * WAX Molding * GEMOLOGY * COOKING

ԱԶԳԱԿ

Հեռ. 258526 - 260115 - 241274

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

AZTAG

TEL: 258526 - 260115 - 241274 E. MAIL: aztag@inco.com.lb

FAX: 258529 P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

Հատ: 241274 - 26.115 - 258526

هاتف: 258526 - 26.115 - 241274

فاكس: 258529 ص.ب. 80860 بورت حمود